

Համայնքին պատկանելու առավելությունները

Տեղական ինտեգրման տարբերակներ և հնարավորություններ ընդունող երկրների, համայնքների և փախստականների համար

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

«ԵՐԲ ՄԵՆՔ ԵՈՐ ԷԻՆՔ ԵԿԵԼ, ՆՐԱՆՔ ՎԱՅԵՆՈՒՄ ԷԻՆ ՇՓՎԵԼ ՄԵՋ ՇԵՏ, ԲԱՅՑ ՇԻՄԱ ԲՈՂՈՐՍ ԸՆԿԵՐՆԵՐ ԵՆՔ: ՄԵՆՔ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՄԻՄՅԱՆՑ: ԱՅԺՄ ՆՐԱՆՔ ԱՍՈՒՄ ԵՆ, ՈՐ ՄԵՆՔ ԱԶԳԱԿԻՑՆԵՐ ԵՆՔ»:

Ալիաջի, փախստականների ղեկավար, Գերիհուն

Ալիաջիի պատմությունը. Գերիհուն, արեւելյան Սիեռա Լեոնե

Ալիաջին լիբերիացի նախկին փախստական է: Նա ապրում է Գերիհունում, որը գյուղակ է արեւելյան Սիեռա Լեոնեում: 2002 թվականին Ալիաջին փախուստի է դիմել դեպի Սիեռա Լեոնե և երկար տարիներ այստեղ ապրելուց հետո որոշել է ինտեգրվել տեղի հասարակությանը:

Ալիաջին իր տեղական համայնքի ակտիվ անդամ է. նա և կինը երեխաներ են մեծացնում, Ալիաջին ղեկավարում է իրենց գյուղում ապրող փախստականներին, իսկ համայնքը տեղացիների ու փախստականների խառնուրդ է: Լինելով փորձառու էլեկտրամեխանիկ՝ նա ցանկանում է իր հմտությունները կրկին կիրառել, եթե նման հնարավորություն ստեղծվի: Մինչ այդ, նա օրվա հացը վաստակում է որպես փայտահատ՝ աշխատանքի մեջ օգտագործելով էլեկտրական սղոց, որը գնել է ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից տրամադրված մեկնարկային ֆինանսական միջոցներով, և մեծ պահանջարկ ունեցող ծառայություն է մատուցում ողջ համայնքին:

Ալիաջին, ինչպես իր համագյուղացի սիեռալեոնացիները, հարկեր է վճարում և հպարտ է, որ տնտեսական, ինչպես նաև սոցիալական տեսակետից սեփական նպաստն է բերում Սիեռա Լեոնեին՝ իրեն ընդունած երկրին:

Բովանդակություն

Առաջնորդող	4
Անցում բեռից դեպի օգուտներ.....	5
<i>Տեղական ինտեգրման ներածություն</i>	<i>5</i>
Երեք նախադեպերի վերլուծություն	9
Տանգանիայի Միավորված Հանրապետություն.....	9
Բելառուսի Հանրապետություն.....	14
Սիեռա Լեոնե.....	23
Խոշոր պատկերը.....	33
<i>Տարածաբանական մտեցումներ տեղական ինտեգրմանը</i>	<i>33</i>
<i>Արեւմտյան Աֆրիկա.....</i>	<i>33</i>
<i>Հատինական Ամերիկա.....</i>	<i>34</i>
Եզրակացություններ	41
Ռեսուրսներ դոնորների եւ ընդունող կառավարությունների համար.....	42

«Համայնքին պատկանելու առավելությունները» գրքույկը պատրաստվել է ՄԱԿ ՓԳՀ Ծրագրային աջակցության եւ կառավարման բաժնի Գործառնական լուծումների եւ անցումային հարցերի բաժանմունքի (ԳԼԱԲ) հովանավորության ներքո: Խմբագրական թիւը՝ ԳԼԱ բաժանմունքի ղեկավար Սաջադ Մալիկը, ԳԼԱ բաժանմունքի գործառնությունների ավագ պատասխանատու Յասուկո Սիմիձուն եւ խաղաղարարության հարցերով խորհրդատու Գաբրի Քենթը, շնորհակալություն են հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց նպաստն են բերել այս գրքույկի ստեղծմանը:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք դիմել.

Գործառնական լուծումների եւ անցումային հարցերի բաժանմունք (ԳԼԱԲ)

Ծրագրային աջակցության եւ կառավարման բաժին

ՄԱԿ ՓԳՀ

hqts01@unhcr.org

Առաջնորդող

Այն փախստականների կեսից ավելին, ուն համար պատասխանատու է ՄԱԿ ՓԳՀ-ն, հայտնվում է ձգձգված իրավիճակների ծուղակում, որտեղ նրանք ապրել են տարիներ կամ նույնիսկ տասնամյակներ շարունակ: ՄԱԿ ՓԳՀ-ի եւ միջազգային հանրության առջեւ ծառայած ամենախրատապ խնդիրներից մեկը նման իրավիճակները կարգավորելն է:

Բոլոր դեպքերին միեւնույն մոտեցում ենթադրող որեւէ լուծում արդյունավետ չի լինի, եւ փորձը ցույց է ավել, որ հաջողության հասնելու առավել մեծ հավանականություն ունեն փոխլրացնող լուծումներ առաջարկող մոտեցումները, որոնք ներառում են փախստականների բեռը կիսելուն ուղղված նշանակալի բաղադրիչ:

Բոլոր փախստականների չորս հինգերորդն ապրում է գարգացող երկրներում, հաճախ՝ իրենց հայրենիքին անմիջականորեն հարեւան երկրներում: Խաղաղության եւ անվտանգության վերահաստատումը փախստականների ծագման երկրներում նրանց հնարավորություն է տալիս վերադառնալ ու վերահետկերվել, եւ, որպես կանոն, դա հենց այն լուծումն է, որը գերադասում են փախստականները:

Այն դեպքերում, երբ վերադարձն անհնար է, փախստական բնակչության մի մասի կամ ողջ բնակչության վերաբնակեցումը երրորդ երկրներում խնդրա առարկա անհատներին տրամադրում է լուծում, շոշափելիորեն ցուցադրում միջազգային համերաշխության եւ ընդունող պետությունների հետ բեռը կիսելու պատրաստակամություն: Սա կարող է նպաստել մնացող ավելի փոքրաթիվ փախստականների համար առավել բարենպաստ միջավայրի ստեղծմանը:

Այն երկրների դեպքում, որոնք արդեն իսկ կրում են փախստականներ ընդունելու ծանր բեռը, եւ լիովին հասկանում են դժկամությունը՝ ընդունել եւ ապահովել լիարժեք տեղական ինտեգրում՝ առանց միջազգային հանրությունից համարժեք աջակցություն ստանալու վստահելի երաշխիքների: ՄԱԿ ՓԳՀ-ն տեղափոխում է աշխատանքները, որպեսզի ապահովի հենց այդպիսի պարտավորությունների ստանձնում. ամրագրել «բեռը կիսելուն ուղղված նոր պայմանավորվածություն»: Միայն առավելագույնի հասցնելով վերաբնակեցման ու կամավոր հայրենադարձության մակարդակը եւ ավելի արդար ձեռով կիսելով փախստականներին ընդունելու պատասխանատվությունը՝ հնարավոր կլինի հուսալ, որ մենք վկան կլինենք տեղական ինտեգրման նկատմամբ ավելի մեծ ընկալունակության:

Այս համատեքստում է, որ եւ ողջունում են սույն գրքույկը, որը տեղական ինտեգրման հնարավորությունները ուսումնասիրում է առանցքային շահագրգիռ կողմերի՝ ընդունող եւ ծագման երկրների կառավարությունների, փախստականների եւ տեղական համայնքների, միջազգային եւ ոչ կառավարական կազմակերպությունների տեսակետից: Նույնիսկ այն դեպքերում, երբ տեղական ինտեգրումը

հնարավոր չէ, կարող են գոյություն ունենալ սեփական ուժերին հենվելու հարահուն հնարավորություններ, որոնք ապաստան տված երկրներում փախստականներին թույլ կտան ավելի պատրաստակամորեն իրենց նպաստը բերել իրենց ընդունող երկրների հասարակություններին ու տնտեսություններին: Աշխատելով միասին, վստահ են, մենք ի վիճակի ենք իրացնել «համայնքին պատկանելու առավելությունները»:

Անտոնիո Գուայերես,

Միավորված ազգերի կազմակերպության

Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար

© ՄԱԿ ՓԳՀ / Բ.Բենն 2008

Անցում բեռից օգուտների.

Տեղական ինտեգրման ներածություն

«ՈՐՈՇ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՆ, ՄԵԿ ԱՅԼ ՄԱՍԸ՝ ՀՅՈՒՍՆ: ՆՐԱՆՑ ԲՈՂՈՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ ԵՆ ՏԱՐԲԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ, ԻՍԿ ՄԻԱՍԻՆ՝ ԱՅԴ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕԳՆՈՒՄ ԵՆ ԿԱՌՈՒՑԵԼ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ: ՄԵՆՔ ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒՄ ԵՆՔ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ, ԱՅԼ ՆԱԵՎ ՕԳՏՎՈՒՄ ԵՆՔ ԱՅՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ՈՐՈՆՔ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐՆ ԻՐԵՆՑ ՀԵՏ ԲԵՐՈՒՄ ԵՆ»:

Ջեյմս Հարդինգ, Ծրագրերի ղեկավար, Սոցիալական գործողությունների ազգային հանձնաժողով (ՍԳԱՀ),

Սիեռա Լեոնե

Ամփոփ նկարագիր

Մարդիկ փախստական են դառնում բազմաթիվ պատճառներով, այդ թվում՝ բռնությամբ ուղեկցվող ֆաղաֆացիական հակամարտությունների, որոնց ընթացքում հասարակ ֆաղաֆացիներն ամենաշատն են տուժում: Սրա հետևանքով մեծ ֆանակությամբ կանայք, տղամարդիկ եւ երեխաներ ստիպված են ապաստան որոնել հարեւան երկրներում եւ ավելի հեռու վայրերում: Այս մարդիկ կարող են տեղահանված մնալ տարիներ կամ նույնիսկ տասնամյակներ շարունակ: Որոշ մարդիկ գուցե մտավախություն ունենան, որ փախստականների երկարատեւ ներկայությունը բացասական ազդեցություն կունենա իրենց համայնքի կամ երկրի վրա:

Իրականում, ինտեգրման եւ պատկանելւոյան հնարավորւոյան ընձեռնման դեպքում նախկին փախստականներն ունակ են լինել ինքնաբաւ եւ իրենց նպաստը բերել ինչպէս սոցիալապէս, այնպէս էլ տնտեսապէս՝ շատ դեպքերում դառնալով իրենց ապաստան տված երկրի ձեռքբերումը:

Տեղական ինտեգրումը փախստականների համար նախատեսված երեք «տեւական լուծումներից» մեկն է, որն ընդունող եւ ծագման երկրների հետ համագործակցութեամբ մշակվել է Միավորված ազգերի կազմակերպութեան Փախստականների հարցերով գերագոյն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) գրասենյակի կողմից: Մյուս երկարատեւ լուծումներն են՝ կամավոր հայրենադարձութեանը փախստականի ծագման երկիր եւ վերաբնակեցումը երրորդ երկրներում:

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

Տեղական ինտեգրումը հատկապէս տեղին է կիրառել այն դեպքերում, երբ մարդիկ տեսանելի ապագայում չեն կարող վերադառնալ իրենց ծագման երկիր, կամ՝ գործարար հարաբերութեանների կամ անուսնութեան միջոցով ամուսն կապեր են հաստատել իրենց ընդունող համայնքների հետ: Այս մոտեցումը հիմնված է այն ենթադրութեան վրա, որ փախստականները մշտական հիմունքներով մնալու են իրենց ապաստան տրամադրած երկրում եւ իրենց դժվարին վիճակին լուծում գտնեն այդ պետութեանում. հնարավոր է, բայց ոչ պարտադիր, որ նրանք դա անեն քաղաքացիութեան ստանալու միջոցով: Տեղական ինտեգրումը մի եղանակ է, որը փախստականներին թույլ է տալիս վերստին կառուցել իրենց կյանքը, դառնալ ինքնաբաւ եւ ապրուստի նոր միջոցներ ստեղծել՝ որպէս իրենց ընդունող հասարակութեաններին նպաստ բերող անդամներ: Բազմաթիւ հյուրընկալող կառավարութեաններ գիտակցում են վերը նշվածը եւ ուղղունում օտարերկրյա գործակալութեանների առաջարկած աջակցութեանը՝ իրականացնելու տեղական ֆորմալ ինտեգրման ռազմավարութեաններ, որոնք հաճախ կործանարար մարդկային տեղահանութեանը վերածում են ազգային հարստութեան:

Աշխարհով մեկ, Արգենտինայից մինչեւ Սիեռա Լեոնե, փախստականներ ընդունած ավելի քան 100 երկրներ իրենց փախստական բնակչութեան առնվազն մի մասին առաջարկում են տեղական ինտեգրում՝ որպէս տեւական լուծում: **Տեղական ինտեգրման ռազմավարութեան** որդեգրելը կախված չէ ընդունող պետութեան հարաբերական հարստութեանից. մասնակից երկրները տարբեր են՝ առավել հարուստ Գերմանիայից ու Կանադայից մինչեւ ցածր եւ միջին եկամուտներ ունեցող այնպիսի տնտեսութեաններ, ինչպիսիք են Լիբերիան, Էկվադորը եւ Տանզանիայի Միավորված Հանրապետութեանը: Վերջին խմբին պատկանող երկրները փախստականներ ընդունող աշխարհի ամենաառատաձեռն պետութեանների թվում են:

Տեղական ինտեգրման ուղջ էութեանը կազմակերպութեանների եւ երկրների միջեւ գործընկերութեաններն ու համագործակցութեանն է՝ հանուն կալեկտիվ լուծումներ գտնելու: Վերջիվերջո, այնուամենայնիվ,

սեղական ինտեգրման ռազմավարությունների շարունակական հաջողության համար վճարահարմարացման և ռեզյուսիվի ինչպես ընդունող երկրների իշխանությունների հետատեսությունն ու ղեկավար կազմը, այնպես էլ միջազգային հանրության աջակցությունը:

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

Գործընթացը.

Պատկանելություն ապահովելու ռազմավարություն

Տեղական ինտեգրումը դիմամիկ է բազմեզր երկկողմանի գործընթաց է փախստականների և նրանց ընդունողների միջև, որում փախստականներն աստիճանաբար դառնում են հասարակությանն իրավական, սնտեսական և սոցիալական առումով ինտեգրված անդամներ:

Մինչև հաճախ փախստականներն ուղիներ են գտնում՝ վտարանդի լինելու ընթացքում ոչ ֆորմալ կերպով ինտեգրվելու իրենց հյուրընկալած երկրներում, փաստերը ցույց են տալիս, որ սեղահանված անձանց ֆորմալ ինտեգրմանը հանգեցնող միջոցառումների՝ մանրակրկիտ ձեռով հավասարակշռված համախմբի իրականացումը դրական հետևանքներ է ունենում ընդունող երկրների հասարակությունների և սնտեսությունների համար: Տեղական ինտեգրման հաջող իրականացված ռազմավարությունը կարող է սեղահանված անձանց օժտել տալու, ինչպես նաև վերցնելու հմտություններով. աշխատել օրինական հիմունքներով, վճարել հարկեր և մասնակցել իրենց նոր հայրենիքի սնտեսությանը: Բազմաթիվ փախստականներ ստացել են լավ կրթություն և շատ հմուտ են: Նրանց շարքերում կարելի է հանդիպել ուսուցիչների, մանկաբարձների և բժիշկների, ինչպես նաև գյուղատնտեսների և գործարարների:

Տեղական ինտեգրման ազգային ռազմավարություն ունենալը նաև հնարավորություն է տալիս գործակալությունների և դոնորների տրամադրած աջակցությունը ներգծել ընդունող երկրում զարգացմանն ուղղված ծրագրերի պլանավորման մեջ: ՄԱԿ ՓԳՀ ծրագրերը, օրինակ ինչպիսին է *«Օժանդակություն փախստականներին հանուն զարգացման» (ՕՓՁ)* նախաձեռնությունը, զարգացման նպատակով ձեռավորվող օրակարգի մաս են դարձնում ինչպես փախստականների, այնպես էլ նրանց ընդունող համայնքների մտահոգությունները: Այդ ծրագրերը միջազգային հանրությունից ներգրավում են զարգացմանն ուղղված լրացուցիչ աջակցություն և նպաստում են մեծ քանակով փախստականներ ընդունած երկրների հետ բեռը կիսելուն, որպեսզի շահեն ինչպես փախստականները, այնպես էլ նրանց հյուրընկալող երկրները:

Տարբեր գործընկեր կազմակերպություններ սեղական ինտեգրման գործընթացները բնութագրելիս օգտագործում են տարատեսակ տերմիններ, սակայն նպատակները բոլորի համար ընդհանուր են՝ աջակցել գործընթացների, որոնք վերջ են դնում փախստականների դժվարին կացությանը և աջակցել այն

համայնքներին, որոնք ընդունում են մարդկանց և սվյալ երկրում իրենց ապագան կառուցելու հնարավորություն տալիս նրանց:

Վերջին հաշիվով՝ ընդունող պետությունների իշխանություններն են որոշում, թե ինչպես է մշակվում և իրականացվում տեղական ինտեգրման իրենց ռազմավարությունը, սակայն յուրաքանչյուր հաջող ռազմավարություն ընդգրկում է երեք առանցքային չափում՝ իրավական, տնտեսական և սոցիալական:

Իրավական կողմը ներառում է այնպիսի իրավական շրջանակի ստեղծում, որի պայմաններում փախստականներն աստիճանաբար ձեռք են բերում ավելի ընդարձակ իրավունքներ ընդունող պետության մեջ, ինչը հնարավոր է, բայց պարտադիր չէ, որ հանգեցնի լիարժեք ֆազաբացիության և հպատակագրման:

Տնտեսական կողմը ներառում է փախստականների օժտումն այնպիսի կարողություններով, որոնց շնորհիվ նրանք կստեղծեն ապրուստի կայուն միջոցներ և կհասնեն այնպիսի կենսամակարդակի, որը համեմատելի կլինի իրենց ընդունած համայնքի կենսամակարդակի հետ: ՄԱԿ ՓԳՀ-ն մի շարք երկրներում աշխատում է ընդունող կառավարությունների հետ գործընկերությամբ, որպեսզի օժանդակի տնտեսական ինտեգրումը, ինֆրաբնակարանները և ձեռներեցությունը խթանող ծրագրերը, որոնցից շահում են թե՛ տեղական համայնքները, թե՛ փախստականները:

Տեղական ինտեգրման **սոցիալական** կողմն օգտագործում է սոցիալական և մշակութային համակարգերը, որպեսզի փախստականներին հնարավորություն տա օգտվել կրթությունից և սոցիալական ծառայություններից, ինչպես նաև մասնակցել համայնքի հանրային կարգին և հարաբերություններին:

Սոցիալական և մշակութային պատկանելության գաղափարները գարգացնելը երկարաժամկետ կտրվածքում հանգեցնում է սոցիալական համախմբվածության բարելավման:

Այս փաստաթուղթը ցուցադրում է, թե ինչպես, համատեղ աշխատելով, ընդունող երկրների կառավարությունները, ՄԱԿ ՓԳՀ-ն և այլ գործակալությունները կարող են մշակել և իրականացնել համայնքային ծրագրեր, ինչպիսիք են գյուղատնտեսական գործունեությունը, լեզվի ուսուցման դպրոցները, հասցաթիման համայնքային փուլերը և նույնիսկ բիլիարդի սեղանները, որպեսզի խորտակեն արգելիքները, խթանեն հանդուրժողականությունը և ստեղծեն սոցիալական ցանցեր փախստականների և տեղացիների միջև:

Երեք կողմեր ընդգրկող այս գործընթացը թույլ է տալիս տեղական ինտեգրման տնտեսական և սոցիալական օգուտների ողջ համախումբը կիսել ինչպես փախստականների, այնպես էլ հյուրընկալող համայնքների հետ:

Երեւնոյ ցախադեղերի վերլուծություն

Տեղական ինտեգրման՝ որպէս փախստականների համար ցախատեղում երեւնոյ տեղական լուծումներից մեկի ներդրման մեխանիզմները տարիների ընթացքում փոքրի կուտակման եւ կիրառման շնորհիվ կատարելագործվել են: Ուսումնասիրության ենթարկված հետեւյալ ցախադեղերը ներկայացնում են տեղական ինտեգրման ներդաշնակ ուղղութիւնները կյանքի կոչելու ուղղութիւնը աշխատող, միայնակից շատ տարբեր երեւնոյ երկրների՝ Տանզանիայի, Բելառուսի եւ Սիեռա Լեոնեի գործնական փորձը: Այս երկրները, այլոց թվում, մշակել են տեղական ինտեգրմանն ուղղված նորարարական եւ հաջողակ աշխատանքներ՝ օգտագործելով իրենց սեփական, ինչպէս նաեւ ՄԱԿ ՓԳՀ-ի եւ շահագրգիռ այլ կողմերի փորձը: Այս երկրներից յուրաքանչյուրը մշակել է միջոցների ներդրման տարբեր ուղիներ. երկրների մի մասի համար օրինական իրավունքները առաջին քայլն են, իսկ մեկ ուրիշ մասի համար մեկնակեղ փախստականների ինքնաբերականությունը եւ տնտեսական մասնակցությունն են:

Տանզանիայի Միավորված Հանրապետություն

Նոր սկիզբ

© ՄԱԿ ՓԳՀ / Բ.Բեննոն 2008

«ԱՅԺՄ ՄԵՆՔ ՏԱՆԶԱՆԻԱ ԿՈՉՎՈՂ ԾԱՌԻ ՄԻ ՃՅՈՒՂՆ ԵՆՔ»:

Առաջնորդ, Քարոսմբա բնակատեղի

Համատեքստը

Տանզանիայի Միավորված Հանրապետությունը միջազգային հանաչում է վայելում փախստականներին ընդունելու իր առաջատար եւ հեռատես մոտեցման համար: Երկրում աշխարհում ամենաշատ փախստականներ ընդունող երկրներից մեկը, Տանզանիան ապաստան է տրամադրում ավելի քան 274,000¹ մարդու, որոնցից շատերը տասնամյակներ շարունակ ի վիճակի չեն եղել վերադառնալ իրենց տներ:

1970-ական եւ 1980-ական թվականներին Տանզանիայի որդեգրած՝ փախստականներին վերաբերող առաջադեմ քաղաքականությունները երկրում բնակություն հաստատած փախստականների խոշորագույն խմբին հնարավորություն տվեցին դառնալ ինքնաբերական: Այս խմբի կազմում էր ավելի քան 150,000 անձանց մեծամասնությունը, ովքեր փախուստի էին դիմել հարեւան Բուրունդիում 1972 թվականին ծագած բռնության ալիքի պատճառով եւ հայտնի էին որպէս «1972-ի բուրունդիացիներ»:

¹ Առ 2010 թ. հունիս: Այս թիվն ընդգրկում է նոր հաստատված տանզանիացիներին, ովքեր դեռեւ չեն ինտեգրվել տեղերում:

Տանգանիայի կառավարությունը փախստական յուրաքանչյուր ընտանիքին հինգ հեկտար հող հասկացրեց այդ նպատակով ընտրված երեք տարածքներում, որոնք տեղացիները կոչում էին «Հին բնակավայրեր»: Տարիների ընթացքում փախստականներն իրենց բնակավայրերը վերածեցին Տանգանիայի ամենապտղաբեր հողատարածքների: Այս համայնքների կողմից անցյալից մեկաբույսերը կազմում են իրենց շրջաններում արտադրված ողջ գյուղատնտեսական արտադրանքի ավելի քան մեկ երրորդը, մինչդեռ ծխախոտի անեցմամբ զբաղվող հիմնական տարածաշրջանում այս եկամտաբեր մեկաբույսի գրեթե կեսը արտադրվել է փախստական ֆերմերներին կողմից՝ իրենց նպաստը բերելով ազգային տնտեսությանը:

«ԵՄ ԻՆՁ ՏԱՆՁԱՆԻԱՑԻ ԵՄ ԶԳՈՒՄ: ԵՍ ՏԱՆՁԱՆԻԱՑԻ ԵՄ: ԻՄ ԲՈՂՈՐ ԸՆԿԵՐՆԵՐԸ ՏԱՆՁԱՆԻԱՑԻ ԵՆ»:

Փախստական տղա, Տանգանիա

2007 թվականին, Բուրունդիում կայացած խաղաղարար գործընթացից հետո, Բուրունդիի եւ Տանգանիայի կառավարությունները եւ ՄԱԿ ՓԳՀ-ն համաձայնության եկան այդ մարդկանց համար տեւական լուծումներ գտնելու ուղղությամբ միասին աշխատելու շուրջ: «Հին բնակավայրերում» անցկացվեց մարդահամար, որի շրջանակներում անհատապես գրանցվեցին բոլոր փախստականները, ինչպես նաեւ արձանագրվեցին նրանց մտադրությունները: Այս գործընթացին զուգահեռ՝ մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկվեց փախստականների սոցիալական, տնտեսական եւ ժողովրդագրական վիճակը: Ստացված տեղեկությունների հիման վրա՝ երեք գործընկերները «Հին բնակավայրերի» մոտ 218,000 նոր գրանցված փախստականների համար մեկեցին համապարփակ լուծումների մի ռազմավարություն, որը հայտնի դարձավ «TANCOSS» անունով: «TANCOSS»-ը կամավոր հայրենադարձություն էր առաջարկում այն փախստականներին, ովքեր ցանկություն ունեին վերադառնալ Բուրունդի, իսկ նրանց, ովքեր ցանկանում էին մնալ Տանգանիայում, ռազմավարությունը տալիս էր հպատակագրման եւ տեղական ինտեգրման հնարավորություն:

Մոտ 170,000 մարդ ընտրեց Տանգանիայում մնալու եւ իրենց ապագան որպես նոր բաղաձայններ այդտեղ կառուցելու տարբերակը՝ սկսելով հպատակագրման գործընթացից:

Քաղաքացիությունը կարևոր է

Հպատակագրում եւ քաղաքացիություն ստանալը նախընտրված մարդկանց մեծամասնությունը պատկանում է «1972-ի բուրունդիացիների» երիտասարդ սերնդին: Ծնված լինելով Տանգանիայում՝ նրանք հաճախեւ են տեղական դպրոցներ, խոսում են ֆիսվահիլի լեզվով եւ որոշ դեպքերում ամուսնացել են տեղացի տանգանիացիների հետ: Չնայած այս երիտասարդները գուցե իրենց ամբողջ կյանքը ապրել են Տանգանիայում, շատ են աշխատել եւ ապրուստի միջոցներ ստեղծել, սակայն նրանց փախստականի

կարգավիճակը հասարակությանը լիարժեք պատկանելու արգելք է եղել: Տանգանիայի ֆաղաֆացի դառնալու հնարավորությունը նրանց թույլ է տալիս ֆորմալացնել իրենց իրավական կարգավիճակը եւ զբաղեցնել իրենց տեղը՝ որպես հասարակության լիարժեք անդամներ:

Նոր հպատակագրված տանգանիացիներից պահանջվում է անհատապես դիմել ֆաղաֆացիության հավաստագրի համար: Այս պայմանն ապահովում է, որ մարդիկ ֆաղաֆացիությունը դիտարկեն որպես անհատական արտոնություն եւ մի բան, որին մարդը պետք է արժանանա՝ միեւնույն ժամանակ պահպանելով լայն հասարակական աջակցություն այդ գործընթացին: Տանգանիայի այս նոր ֆաղաֆացիների համար նշված ֆայլը մեկնարկն է պատկանելության մի գործընթացի, որն անցած 40 տարիների ընթացքում շրջանցում էր նրանց: Իրենց նոր իրավական կարգավիճակի հիմա վրա՝ նոր հպատակագրված տանգանիացիները աջակցություն կստանան մի պաշտոնական գործընթացի միջոցով, որը մշակվել է՝ այս մարդկանց որպես Տանգանիայի հասարակության լիարժեք անդամներ ինտեգրման հնարավորություն տալու նպատակով, երբեք «Հին բնակավայրերի» սահմաններից դուրս:

Համայնֆային ինտեգրման ազգային ռազմավարության մշակումը

Տանգանիայի կառավարության առջեւ ծառայած մարտահրավերներից մեկը հետեւյալն էր. ինչպե՞ս հասնել այս նոր ֆաղաֆացիների սոցիալական ինտեգրմանը եւ խթանել ազգային միասնությունը: Կառավարության պատրաստակամությունը՝ ինտեգրել այդպիսի հսկայական թվով մարդկանց, մասամբ բխում էր այն հանգամանքից, թե որքան դրական էր բնակչության այս խմբի արձագանքը ինքնաբավությունը խթանող սկզբնական ֆաղաֆազիանությանը: Նոր հպատակագրված տանգանիացիները ցուցադրել էին տեղական մշակույթների իրենց ըմբռնումն ու լեզուների իմացությունը, ինչպես նաեւ Տանգանիայի հասարակությանը դրական մասնակցություն բերելու իրենց կարողությունն ու պատրաստակամությունը: Այս նոր ֆաղաֆացիներին մեկ մարզում պահելու եւ բուրունդիացու էթնիկական ինքնությունը հնարավորինս բյուրեղացնելու փոխարեն, մշակվեց երկրի տարածքով մեկ նրանց բաշխելու ռազմավարություն՝ ապահովելու լիարժեք սոցիալական ինտեգրում Տանգանիայի հասարակությանը:

Այս գործընթացին օժանդակելու նպատակով Տանգանիայի կառավարությունը եւ գործընկերները մշակեցին Համայնֆային ինտեգրման ազգային ռազմավարության ծրագիր (ՀԻԱՌԾ), որպեսզի նախկին փախստականներին հնարավորություն տրվի իրենց ընդունած երկրում որպես ֆաղաֆացի օգտվել իրավունքների ողջ համախմբից: Հիմնվելով հողակտորների առկայության եւ տեղական իշխանությունների հետ խորհրդակցությունների արդյունքների վրա՝ ընտրվեց տասնվեց մարզ. ներառվեցին նաեւ այն տասը տարածքներից ութը, որոնք նախընտրել էին նախկին փախստականները (ինչպես նրանք նշել էին սնային սնունտությունների շրջանում 2008 թվականին անցկացված հարցման ընթացքում):

«ՄԵՆՔ ԼԻԱՀՈՒՅՍ ԵՆՔ, ՈՐ ՏԱՆՉԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱՅԻ ԴԱՌՆԱԼՈՒՆ ՊԵՍ ԿԿԱՐՈՂԱՆԱՆՔ ԱՆԵՂ ԱՎԵԼԻՆ: ՄԵՆՔ ՄՏԱԾՈՒՄ ԵՆՔ ԿԹՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՊԵՍՁԻ ԿԱՐՈՂԱՆԱՆՔ ԴԱՌՆԱԼ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ, ԲԺԻՇԿՆԵՐ, ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՈՒ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐ»:

Օգեստե Գելեասի, գյուղ կուկամա, Միլանո բնակատեղի

© ՄԱԿ ՓԳՀ/Բ.ԲԵՆՈՆ 2008

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԵՐ ԽՆԴԻՆՔՆ Է՛ ՎԱՍԿԱՆԱԼ, ՈՐ ՄԵՆՔ ՉԵՆՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԱՅՍ ՄԱՐԴԿԱՆՑ ՊԱՀԵՂ ԼՈՒՅՆ ՃԱՄԲԱՐՆԵՐՈՒՄ՝ «ՀԻՆ ԲՆԱԿԱՎԱՅԻՆԵՐՈՒՄ»:

ԹՈՂ ԼՐԱՆՔ ԱՊՐԵՆ ԱՅՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ, ՈՐՔԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ Է՛ ՇՓՎԵՆ ԱՅՂ ՏԱՆՉԱՆԻԱՅԻՆԵՐԻ ՉԵՏ: ԴԱ ԿԱՐՈՂ Է ՄԻ ՓՈՔԻ ԽՆԴԻՐ ՀԱՐՈՒՑԵՂ ԼՐԱՆՑ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՉՎՈՂ ՋԱՆՔԵՐԻ ՏԵՍԱԿԵՏԻՑ, ՍԱԿԱՅՆ ՄԵՆՔ ԼՍՎ ԳԻՏԵՆՔ ՏԵՂԵՐՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԸ: ԴԱ ԻՐԱԳՈՐԾԵԼԻ Է, ԵԹԵ ԳԱՂԱՓԱՐՆ ԸՆԴՈՒՆՎԻ»:

Միգելոն Պետեր Պինդո, Տանգանիայի վարչապետ (2008)

Տանգանիայի կառավարությունը նաև մշակեց հաղորդակցության մի ռազմավարություն՝ տեղական իշխանություններին, տեղական համայնքներին և նոր հպատակագրված տանգանիացիներին տեղական ինտեգրման մասին տեղեկացնելու և այս գործընթացի մեջ նրանց ներգրավելու նպատակով:

«Հին բնակավայրերից» տեղափոխվող նախկին փախստականների համար սա մի նոր սկիզբ է, և չնայած այն ենթադրում է զգալի փոփոխություններ, նաև նոր հնարավորություններ է առաջարկում: Նոր հպատակագրված տանգանիացիների համար ստեղծվեց ֆինանսական աջակցություն և տեղափոխման նպաստների փաթեթներ ստանալու հնարավորություն: Նրանք նաև օժանդակություն են ստանալու հողի ձեռքբերման համար, որպեսզի կարողանան ապավինել սեփական ուժերին և պահպանեն ինֆրաֆակտորները: Նրանք, ովքեր առավել խոցելի են, ինչպիսիք են ծերերը կամ անկարողները, կստանան լրացուցիչ օժանդակություն: Ակնկալվում է, որ այս նոր ֆադաբացիները տնտեսական օգուտ կբերեն այն տարածքներ, որտեղ կվերաբնակվեն, քանի որ նրանք արդեն իսկ ներկայացնում են բարձր արտադրողականություն ունեցող, հմուտ և ինֆրաֆակտոր գյուղատնտեսության և առևտրի ոլորտներում:

Ինտեգրմանը աջակցելու նպատակով փախստականներին ընդունած համայնքներում առաջ են քաշվել մի շարք նախաձեռնություններ, ներառյալ՝ օգնություն կենսապահովման, բնակարանով, հողով ապահովման հարցում, ինչպես նաև համայնքային զարգացման ծրագրեր: Այս նախաձեռնությունները օգուտներ կբերեն նոր հպատակագրվածներին և նրանց նոր հարեւաններին՝ խորացնելով և ընդլայնելով համայնքային զարգացումը և խաղաղ գոյակցությունը:

ՀԻԱՌԾ-ի իրականացմանը միջազգային աջակցության պահպանումն ունի կենսական նշանակություն. հարկ է օժանդակել նոր հպատակագրվածներին՝ տեղափոխման հարցում, մշակել համապարփակ ծրագրեր, որոնք կլիքանեն ազգային համախմբվածությունը եւ անվտանգությունը, ինչպես նաեւ՝ ընդլայնել սոցիալական ծառայությունները նախկին փախստականների վերաբնակեցման համար ընտրված 16 մարզերում:

Նոր գործընկերությունների հիմնումը

Այսպիսի հսկայական քանակի մարդկանց համար տեղական լուծումներ գտնելը պահանջում է ընդգծված ամուր գործընկերային հարաբերություններ կառավարությունների, դուրս կազմակերպությունների, մարդասիրական օգնության եւ զարգացման հարցերով զբաղվող գործակալությունների, իրականացնող գործընկերների եւ հենց իրենց՝ փախստականների միջեւ:

Տեղական ինտեգրմանն ուղղված այս հավակնոտ ծրագիրը ներառելու է մինչեւ 180,000 անձանց վերաբնակեցում: Տեղական ինտեգրման ֆորմալ ռազմավարությունը թույլ է տալիս տեղական ինտեգրման կարիքները ներառել պետության զարգացման պլանավորման մեջ՝ որպես Միավորված ազգերի կազմակերպության Զարգացմանն ուղղված գործողությունների ծրագրի [United Nations Development Action Plan (UNDAP)] (ՄԱԿ ԶԳԾ) մի մաս: Ի հավելումն ՄԱԿ-ի գործակալությունների հետ գործառնական հարցերում գործընկերությունների, շարունակվելու են ջանքերը՝ ուղղված Տանգանիայի որպեսզի ծրագրի օգուտները պահպանելու նպատակով ՄԱԿ-ի համակարգի, ներառյալ՝ Համաշխարհային բանկի ռեսուրսների ներգրավմանը՝ ՄԱԿ ԶԳԾ առաջնահերթությունների որոշման միջոցով ավելի մեծ ծավալի ուղղակի ֆինանսական աջակցություն ապահովելու հանապարհով:

Տանգանիայի կառավարության ձեռնարկած պատմական ջանքը՝ վերջ դնել բուրունդիացի փախստականների կացությանը, աջակցություն գտավ նաեւ ընդարձակ դոնորական համայնքի մոտ: Զարգացման բնագավառում աշխատող գործընկերները, որոնք ունեն նեղ հյուղային հետաքրքրություններ եւ փորձ, միջպետական գործակալությունները եւ ՄԱԿ-ի համակարգից դուրս գործող բազմակողմ կազմակերպությունները ներգրավված են այս գործընթացին: Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման նախարարությունը (ՄԹ ՄԶՆ/DFID) ուղղակիորեն սրամադրել է ավելի քան 7 միլիոն ԱՄՆ դոլար՝ աջակցելու համապարփակ լուծումների ռազմավարությանը, ներառյալ՝ նախկին փախստականների տեղական ինտեգրմանը Տանգանիայում: Այս աջակցությունը կօգնի նաեւ անցումային շրջանում բավարարել այս նոր հպատակագրված տանգանիացիների հրատապ կարիքները եւ հավելյալ կապիտալ սրամադրել այնպիսի ծախսերի համար, ինչպիսին է լրացուցիչ շինարարական նյութերի ձեռքբերումն այն ժամանակ, երբ այդ մարդիկ սկսում են իրենց նոր կյանքը:

«ՏԱՆՁԱՆԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՄԱԿ ՓԳՀ-Ի ԵՎ ԴՈՆՈՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՕԳՆԵՑ ԴԵՊԻ ԼԱՎԸ ՓՈՆԵԼ՝ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՏԱԼ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ: ՏԱՆՁԱՆԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏԿԱՊԵՍ ԳՈՎԵՍՏԻ Է՛ ԱՐԺԱՆԻ ԱՎԵԼԻ ՔԱՆ 165,000 ԲՈՒՐՈՒՆԴԻԱՅԻ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԻՐ ՀԱՄԱՐՁԱԿ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՐ»:

Դարեն Ուելչ, ՄԹ ՄԶՆ գրասենյակի ղեկավար, Տանգանիա

Նման գործընկերությունները հարաբար կարեւորություն են ունենալու այն ընթացքում, երբ այս ծրագիրը թեւականում է երկարաժամկետ զարգացման փուլ, 2012 թվականից առաջին:

Բուրունդիում խաղաղության հաստատման բանակցություններից տասը տարի անց՝ Տանգանիայի կառավարության անդամադեպ ժեստը փակում է Աֆրիկայում տեղահանման ամենաերկարատև պատմություններից մեկի էջը: Նման հսկայական ֆանակով փախստականների տեղական ինտեգրումը կնպաստի նաև տարածաբանային կայունությանը՝ նվազեցնելով Բուրունդիի ընդունող համայնքների բեռը: Սա հանապարհի սկիզբն է, եւ որպեսզի ապահովվի տեղական ինտեգրման այս արտակարգ գործընթացի հաջող իրականացումը եւ հարակայունությունը, շարունակական միջազգային աջակցությունն ունի կենսական նշանակություն:

© ՄԱԿ ՓԳՀ / Ե. Վուլֆերիուս, ապրիլ 2010

ԲԵՂԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.

«Մարդկանց միջև ընկերությունը նրանց ուժն է»

Համատեքստը

Բելառուսի Հանրապետությունը համեմատաբար երիտասարդ պետություն է, որն իր անկախությունը ձեռք է բերել 1991 թվականին: Այս երկրում ապրում է փախստական հանաչված անձանց մի փոքր խումբ, ում ֆանակը չի գերազանցում 1,000 հոգին: Փախստական հանաչվածների ավելի քան 70 տոկոսն Աֆղանստանից են եւ մշակութային ու էթնիկ տեսակետից շատ են տարբերվում իրենց հյուրընկալած երկրի բնակչությունից: Ավելի փոքր թիվ են կազմում Ասիայից եւ Աֆրիկայից եկածները, իսկ մի ֆանիսը ոչ հեռավոր այնպիսի երկրներից են, ինչպիսիք են Վրաստանը, Ադրբեջանը եւ Հայաստանը:

1995 թվականից ի վեր՝ ՄԱԿ ՓԳՀ-ն Բելառուսի կառավարության հետ գործընկերությամբ աշխատել է փախստականներին եւ ապաստան որոնողներին մարդասիրական օգնություն սրամաղբելու ուղղությամբ:

Շուտով առաջ եկավ տեղական ինտեգրման անհրաժեշտությունը՝ որպես տրամաբանական լուծում այն անձանց համար, ովքեր Բելառուսում ստացել էին փախստականի կարգավիճակ:

Այսօր Բելառուսն ունի որդեգրած ֆաղափականություն, համաձայն որի փախստականների ինտեգրումն սկսվում է այն պահից, երբ նրանք ժամանում են երկիր, եւ շարունակվում է նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք սպասում են, որպեսզի որոշվի իրենց իրավական կարգավիճակը: Այս մոտեցումը ձեւավորվել է բնակարանային ապահովման, կրթության եւ զբաղվածության ոլորտներում պիլոտային (փորձնական) ծրագրեր իրականացնելու գործընթացի արդյունքում, երբ ծրագրերի հաջողությունից շահում էին տեղերում, եւ գուգահեռ իրականացվում էր կարողությունների զարգացում տեղական եւ ազգային մակարդակներում: Փոխվստահության հարաբերություններ են ձեւավորվել ՄԱԿ ՓԳՀ-ի, կառավարության, տեղական իշխանությունների, փախստականների եւ տեղական համայնքների միջեւ, ինչը հանապարհ է հարթել դեպի ավելի փորձալ պետական աջակցություն տեղական ինտեգրմանը: Այն իր հերթին ընդլայնել է միջազգային օժանդակության հնարավորությունները՝ օգնելու ավելի արդյունավետ ինտեգրմանը:

Փախստական հանաչված անձինք օգտվում են նույն իրավունքներից, ինչ Բելառուսի ֆաղափացիները, եւ այժմ ուշադրությունը սեւեռված է ապահովելուն, որ բոլոր փախստականների համար հասանելի լինեն այդ իրավունքները, եւ նրանք կարողանան լիարժեքորեն ինտեգրվել: Աշխատելու եւ սեփական ուժերին հենվելու կարողությունը թե՛ փախստականների եւ թե՛ կառավարության կողմից դիտարկվում է որպես Բելառուսում հանրային եւ համայնքային կյանք մուտք գործելու բանալի, եւ մի ասպարեզ է, որտեղ Բելառուսը գրանցում է սպավորիչ արդյունքներ:

Այս չափազանց գործնական եւ արդյունավետ մոտեցումն ինտեգրմանը ուղղակի եւ շուտափելի ազդեցություն ունի փախստականների եւ ընդունող համայնքների կյանքի վրա: Համայնքային մակարդակում վարվող բիզնեսներում բելառուսների եւ փախստականների միջեւ աշխատանքը եւ ընկերությունը համատեղվում են: Դպրոցները, համայնքային կենտրոնները եւ ձեռնարկությունները աֆդանցի, վրացի եւ բելառուս ընտանիքների միջեւ փորձի եւ մշակութային փոխանակման վայրեր են: Երեխաների նոր սերունդներ են մեծանում, ովքեր իրենք իրենց ընկալում են ոչ թե որպես փախստականներ, այլ որպես Բելառուսի ֆաղափացիներ՝ միեւնույն ժամանակ պահպանելով հպարտության զգացում սեփական մշակութային ժառանգության համար:

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

«ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍ ԵՐԿՐՈՒՄ ԵՎ ԱՅՍ ՄԱՐԴԿԱՆՑ ՈՒ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶԵՑՆՈՒՄ ԵՆ ՆՐԱՆՑ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ: ՄԵՆՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ԱՅՍ ՄԱՐԴԿԱՆՑ ԴԱԶՆԵԼ ԵՐԿՐԻ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ, ՈՎՔԵՐ ՕԳՏԱԿԱՐ ԿԼԻՆԵՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ, ՁԵՆ ՏԱՐԲԵՐՎԻ ԵՐԿՐԻ ՄՅՈՒՍ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՑ, ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՆՐԱՆՑ ԴԱՐՁՆԵԼ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԼԻԻՐԱՎ ԱՆԴԱՄՆԵՐ»:

Տասյանա Տումաշիկ, Քաղաքացիության եւ միգրացիայի վարչություն, Ներքին գործերի նախարարություն,
Բելառուս

Տեղականից դեպի համապետական. մի ռազմավարության էվոլյուցիան

2007-2008 թվականներին Եվրոպական միության (ԵՄ) ֆինանսավարմամբ Բելառուսում, Մոլդովայում եւ Ուկրաինայում անցկացվեց փախստականների տեղական ինտեգրման վերաբերյալ նախնական ուսումնասիրություն: Արդյունքում, Բելառուսի Հանրապետության կառավարությունը համաձայնեց ՄԱԿ ՓԳՀ-ի առաջարկությանը՝ նախապատրաստել մի ծրագիր եւ դիմել Եվրոպական հանձնաժողովին (ԵՀ)՝ ինտեգրման ազգային ռազմավարության ստեղծմանն աջակցելու խնդրանքով: 2009 թվականին նշված երեք հարեւան երկրների կողմից մշակվեց «Փախստականների տեղական ինտեգրումը Բելառուսում, Մոլդովայում եւ Ուկրաինայում» անվանմամբ մի տարածաշրջանային ծրագիր:

ԵՀ-ից եւ ՄԱԿ ՓԳՀ-ից ստացած օժանդակության շնորհիվ Բելառուսի կառավարությունը շարունակեց տեղական ինտեգրման ռազմավարություններ մշակելու եւ իրականացնելու ազգային կարողությունների զարգացումը: Բելառուսում իրականացման գործընթացը ներառում է երեք ուղղություն. որպես փախստական նահաջված անձանց համար հավասար օրինական, սոցիալական եւ տնտեսական իրավունքներ սահմանող իրավական շրջանակի մշակում, խնդրի նկատմամբ «զգայունություն» ապահովող կամ համապետական մակարդակով իրազեկություն բարձրացնող պարբերական ծրագրեր, որոնք նախապահ են հարթում ազգային եւ տեղական իշխանությունների, տեղական համայնքների եւ փախստականների միջեւ ինտեգրման համար, նախաձեռնությունների շարք՝ ուղղված տեղերում ինտեգրման գործնական իրականացման խորացմանը:

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

Տեղական ինտեգրման նկատմամբ համակարգային մոտեցման մշակումը եւ ազգային ֆորումների գործադրությունները, որոնց շրջանակներում շահագրգիռ բոլոր կողմերը բնակարկում են տեղական ինտեգրման պրակտիկան, ձեռափոխության են ենթարկել ինտեգրման նկատմամբ մոտեցումները:

«ԱՅՍՏԵՂ ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, ԵՎ ԱՅՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՐԵՆ Է ԳՈՐԾՈՒՄ: ԱՅՍ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԳՈՒՑԵ ԴԵՌԵՎՍ ՄՇԱԿՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ Է, ՍԱԿԱՅՆ ԱՅՆ ՄԵՁ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՆՉԸ ՄԵՆՔ ՉԷԻՆՔ ԿԱՐՈՂ ԱՆԵԼ ՆԱԽԿԻՆՈՒՄ»:

2011 թվականին շահագրգիռ կողմերից ստացված առաջարկությունները կներառվեն ժողովրդավարական անվտանգության պետական ծրագրում, որը օրենսդրական ակտի նախագիծ է: Այս փաստաթուղթը դիտարկվում է որպես առաջին ֆալշ դեպի տեղական ինտեգրման պատասխանատվությունը և ղեկավարումը ազգային իշխանություններին հանձնելը: Նման երիտասարդ պետության համար սա նշանակալի առաջընթաց է:

Ինտեգրումը գործնականում

Գումել ֆալշի մերձակայքում, մի հանգիստ բնակելի թաղամասում, երեխաները խաղում են ներկված փայտյա ճոճանակների և սղարանների վրա՝ մի վարդագույն-սպիտակ շենքի դիմաց: Սա Գումելի ժամանակավոր կեցության կենտրոնն է, որը նախատեսված է փախստականների և կարիքավոր բելառուսների համար, և գտնվում է տեղական համայնքի կենտրոնում: Ներկայում այստեղ բնակվում է յոթ հոգի, իսկ կենտրոնի ընդհանուր տարողունակությունը թույլ է տալիս կացարանով ապահովել 24 անձի:

Սահարների² ընտանիքի անդամներն ամենավերջին բնակիչներն են: Այս ընտանիքը վերջերս է լքել Աֆղանստանը. նրանց տրամադրվել է ժամանակավոր կացարան՝ մինչ կորուսվի նրանց փախստականի կարգավիճակ տալու հարցը: Որպես ինտեգրման գործընթացի մի մաս, Սահարների ընտանիքը հաճախում է ուսուց լեզվի դասերի: Ուսուցիչը աֆղանցի նախկին փախստական է, ով աշխատում է մի տեղական համայնքահեն կազմակերպությունում, որն ինտեգրման գործընթացի միջոցով աջակցում է նոր ժամանած փախստականներին:

Այս կենտրոնը նաև գործում է «մեկ պատուհանի» սկզբունքով և մի շարք ծառայություններ մատուցում փախստականներին, ապաստան որոնողներին և տեղացի խոցելի անձանց, ովքեր սոցիալական աջակցության կարիք ունեն: Փախստականներին գործունեության առանցք դարձնելու այս մոտեցումը ծառայությունները կենտրոնացնում է մի տարածքում և նպաստում տեղացիների ու փախստականների միջև կարեկցանքի և ըմբռնման մթնոլորտի ձևավորմանը:

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՏԵՄՆԵՂ, ՈՐ ԲԵՂԱՌՈՒՄԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՁ ԷՂ ԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ. ՈՐ ԿԱՆ ԱՅՂ ԽՈՑԵՂԻ ԱՆՁԻՆՔ, ՈՎՔԵՐ ԱՁԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ, ԵՎ ԿԱՆ

² Ընտանիքի ազգանունը փոխված է:

ԽՆԴԻՐՆԵՐ, ՈՐՈՆՔ ԲՈՂՈՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՆ: ԱՅՍ ՊԱՏՃԱՌՈՎ Է, ՈՐ ԿԵՆՏՐՈՆԸ ԱՏԵՂԾՎԵՑ ՀԵՆՑ ԱՅԴՊԻՍԻՆ»:

Ալեքսանդր Սեմյոնով, Աշխատանքի, զբաղվածության եւ սոցիալական պաշտպանության կոմիտե, Գոմելի մարզ

Մարգային իշխանությունները, Բելառուսի Կարմիր խաչի կոմիտեն եւ ՄԱԿ ՓԳՀ-ն միասին աշխատում են՝ ապահովելու, որ զբաղվածությունը եւ սոցիալական ապահովությունը հասանելի լինեն փախստականներին: Վերջին հաշվով, սակայն, տեղական ինտեգրման բելառուսական ռազմավարության առանցքում սեփական ուժերին հենվելն ու ինֆորմությունն է, եւ այստեղ է, որ նորարարական սոցիալական ձեռներեցության մեխանիզմը տալիս է նկատելի արդյունք:

Սոցիալական ձեռներեցության դերը

Երեկոյան երկնքում փայլում է մի մեծ նեոնային նշան՝ «Ոսկե գունդ» գրառմամբ. սա Գոմելում բիլիարդի առաջին ախոմբն է: Բիլիարդը ժողովրդականություն է վայելում տեղացիների շրջանում, եւ փախստականի կողմից դեկավարվող այս ձեռնարկությունը տեղի համայնքի ուժադրության կենտրոնում է: Դա երկու տարվա քրտնաջան աշխատանքի արդյունք է, որոնց ընթացքում ՄԱԿ ՓԳՀ-ն եւ Զբաղվածության տարածքային կոմիտեն սերտորեն համագործակցում էին Գոմելում գործող Աֆղանցիների համայնքային կազմակերպության հետ՝ հղկելու այս գաղափարը, իրականացնելու շուկայի հետազոտություն եւ մշակելու իրագործելի բիզնես-պլան: Տեղական իշխանություններն աջակցեցին ձեռնարկության ստեղծման իրավաբանական եւ քաղաքական անհրաժեշտ գործընթացներում, իսկ ՄԱԿ ՓԳՀ-ն տրամադրեց խորհրդատվություն, 58,000 ԱՄՆ դոլարի չափով նախնական ֆինանսավորում եւ համապատասխան բիզնես մոդելը:

2005 թվականին, ձեռներեցության հակումներ ունեցող մի աֆղանցի երիտասարդ՝ Դաուդ անունով, ով անդամակցում էր «Բռնի տեղահանվածների «Ինտեգրում Ա» հիմնադրամին», ձեռնարկատիրական մի շարք գաղափարներ առաջարկեց Գոմել քաղաքում իրականացնելու համար, որոնցից մեկը «Ոսկե գունդ» բիլիարդի ախոմբի հիմնադրումն էր: Դաուդը, ով բնականրեկն կայացավ որպես համայնքի առաջնորդ, այժմ «Ոսկե գունդ»-ի տնօրենն է: Այս ախոմբում զբաղված է 14 հոգի, որոնց թվում վեցը փախստականներ են: Ախոմբը շահութաբեր է եւ աջակցում է Գոմելում բնակվող բոլոր փախստականների համար նախատեսված համայնքային ծառայությունների մի ընդարձակ շարքի մատուցմանը, ներառյալ՝ լեզվի այն դասընթացը, ուր հաճախում է Սահարների ընտանիքը: Այն նաեւ շփման կենտրոն է, որտեղ բելառուսները եւ փախստականները միասին աշխատում եւ խաղում են, եւ արդյունքում նրանցից շատերը դարձել են լավ ընկերներ:

Ալեքսանդր Սեմյոնով, Աժխատանֆի, զբաղվածության եւ սոցիալական պաշտպանության կոմիտե, Գոմելի մարզ

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

«ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԷՐ, ՈՐ ԵՍ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԷՒ ՍՏԱՑԵԼ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ: ՄԵՆՔ ԱՎԵԼԻՆ ԵՆՔ, ՔԱՆ ՊԱՐԶԱՊԵՍ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ: ՄԵՆՔ ՄԻԱՍԻՆ ԵՆՔ ՆՇՈՒՄ ՀԱՐՍԱՆԻՔՆԵՐ, ԾՆՆԴՅԱՆ ՕՐԵՐ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՆՔ ՖՈՒՏԲՈՒԼԻ ԵՎ ԲԻՂԻԱՐԴԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ... ԱԿՈՒՄԲԸ ԿԱՐԾԵՍ ԸՆՏԱՆԻՔ ԼԻՆԻ»:

Անաստասիա, ախմբի բելառուս աշխատակցուհի, «Ոսկե գունդ»

Դառուղի համար դա նաեւ հաջողության անձնական պատմություն էր: Նա Բելառուսի ֆաղափախություն ստացել է երկու տարի առաջ: Քաղաքացիություն ստանալու որակավորման պահանջներից մեկը զբաղվածություն ունենալն է, եւ Դառուղը ոչ միայն ունի զբաղվածություն, այլ ներկայում նաեւ գործատու է՝ ինչպես փախստականների, այնպես էլ բելառուսների:

Մոդելի մշակում

Ջեռնարկատիրության բելառուսական մոդելը համընկնում է ՄԱԿ ՓԳՀ-ի առանցֆային նպատակի հետ. գորացնել փախստականների համայնքները, որպեսզի նրանք հաջողակ ծրագրերի միջոցով օգնեն իրենք իրենց: Փախստականների համար եկամուտներ ստեղծող համայնքներ կազմակերպությունները (ՀՀԿ) առաջին անգամ Բելառուսում փորձարկվել են 2003 թվականին, երեք խոշոր ֆաղափներում՝ Գոմել, Գրոդնո եւ Մինսկ: ՀՀԿ-ները գործում են որպես փախստականներին սոցիալական աջակցություն ցույց տվող խմբեր, եւ, աշխատելով բելառուսական ֆաղափական համակարգի շրջանակներում, տրամադրում են մեխանիզմ՝ իրականացնելու փախստականներին հուզող խնդիրների եւ մտահոգությունների շուրջ լուրջ փախստական գործունեություն՝ ուղղված ֆաղափային, մարգային եւ համապետական իշխանություններին:

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

Համայնքներ կազմակերպությունների ինֆնապահպանման օգնելու նպատակով ՄԱԿ ՓԳՀ-ն նախաձեռնեց պիլոտային համագային մրցույթ՝ խթանելու համայնքային ձեռնարկատիրության այնպիսի գաղափարներ, որոնք կարող են զբաղվածություն ապահովել ինչպես փախստականների, այնպես էլ բելառուսների համար: Հաջողությամբ մրցակցելու համար պահանջվում էր, որ բիզնես միավորները լինեն ինֆնաբավ եւ շահույթաբեր, ֆանի որ շահույթն օգտագործվելու է համայնքը պահելու ծախսերի փոխհատուցման եւ

կազմակերպությունների կողմից փախստականներին աջակցելու գործառույթների իրականացման համար: Այս նորարարական մեխանիզմի շնորհիվ ստեղծվել է հաջողակ համայնֆային բիզնեսների մի ամբողջ խումբ, ներառյալ՝ «ԲելաՎրաստան» հացի փուռը Գրողնոյուն եւ «Ոսկե գունդ» բիլիարդի ակումբը Գոմելում:

ՄԱԿ ՓԳՀ-ն եւ հասարակական կազմակերպությունները (ՀԿ) խթանում են վերոնշյալ գործընթացը՝ փախստական առաջնորդներին եւ սոցիալական ձեռնարկատերերին տրամադրելով բիզնեսի որակյալ գաղափարներ, մեկնարկային կապիտալ եւ նախկինում իրականացված ծրագրերից ֆավոր փորձը: Արդյունքում ստեղծված ՀՀԿ-ները ծաղկել են: Հաջողակ համայնֆախեն կազմակերպությունները հետագայում հղանում են համայնֆային ձեռնարկատիրության նոր գաղափարներ եւ ավելի մեծ թվով համայնֆարձակների եւ մասնակցության հնարավորություն տալիս: Դրանք տրամադրում եւ ֆինանսավորում են այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են լեզվի ուսուցման դասերը, որոնք ամրապնդում են ինտեգրումը, բարձրացնում իրազեկվածության մակարդակը եւ խթանում միջհամայնֆային հարաբերությունները:

Մի սերնդից՝ հաջորդ սերնդին

2010 թվականին, կառավարության լիակատար աջակցությամբ եւ Եվրահանձնաժողովի Տարածաշրջանային ինտեգրման ծրագրի կողմից ֆինանսավորմամբ, ՄԱԿ ՓԳՀ-ն նախաձեռնեց համայնֆային բիզնես գաղափարների մեկ այլ մրցույթ: Հաղթող սոցիալական ձեռնարկությունը գործում է Մինսկում եւ աշխատանքով ապահովում փախստական կանանց:

Բոլոր փախստականներն իրենց ապաստան տված երկրներում հսկայական ջանքեր են գործադրում՝ զբաղվածություն ունենալու համար, նույնիսկ այն դեպքերում, երբ նրանք հմուտ մասնագետներ են, ֆանի որի նրանցից շատերը գրկված են լինում մասնագիտությունը հաստատող իրենց փաստաթղթերից եւ նաեւ բախվում են լեզվական դժվարությունների: Մասնավորապես կանանց եւ ավագ սերնդի ներկայացուցիչների համար, այնուամենայնիվ, զբաղվածության հնարավորություններ գտնելը հատկապես դժվար է՝ մշակութային եւ գենդերահեն սահմանափակումների պատճառով:

Ֆարեդան 50-ն անց կին է, ով նոր սոցիալական ձեռնարկության հիմնադիրներից մեկն է: Ֆարեդան Աֆղանստանում աշխատել էր որպես կենսաբանության ուսուցչուհի, իսկ Բելառուսում չէր կարողանում աշխատանք գտնել, եւ աջակցության կարիք ունեցող երեք երեխաների ու հաճմանգամ ամուսնու հետ միասին՝ կյանքը չափազանց դժվար էր: Ֆարեդան սիրում է ասեղնագործել: Նա ընկերների ու հարեւանների համար պատրաստում է նրբորեն ասեղնագործած բարձի ծրարներ եւ սփռոցներ: Շաբաթական երկու անգամ նա այցելում էր Մինսկում գտնվող՝ Աֆղան կանանց ակումբը: Ստեղծված լինելով ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից՝ կանանց գորացման եւ եկամուտների ստեղծման հմտություններին եւ դրան ուղղված

գործողություններին աջակցելու նպատակով, այժմ Կանանց ախտաբան Միևնուսան ղեկավարվում է Աֆղանցիների համայնֆահեհ կազմակերպության կողմից: Այստեղ Ֆարեդան եւ այլ կանայք միասին թեյ են խմում, պատրաստում տարատեսակ ուտեստներ, ասեղնագործում եւ միմյանց հետ կիսում իրենց խնդիրները: Զրույցների հիմնական թեման հետեւյալն է՝ ինչպես գտնել պաշտոնապես գրանցված զբաղվածություն:

© ՄԱԿ ՓԳՀ / Բելառուս 2010

Բարձրորակ ապրանքներ արտադրելու նպատակով կարի ձեռնարկություն հիմնելու գաղափարը ծագել է ախտաբանի կանանց, աֆղանցիների համայնքի եւ կանանց աջակցելու նպատակով ձեռնարկատիրական գաղափարներ փնտրող ՄԱԿ ՓԳՀ-ի մասնակցությամբ ֆինանսական արդյունքում: Այս գործընթացից ծնվեց «Սպիտակեղենի կայսրությունը»: ՄԱԿ ՓԳՀ-ի համար այս ձեռնարկությունը արժեքավոր հանապարհ է՝ խթանելու կանանց զբաղվածությունը՝ հենվելով համայնքներում առկա հմտությունների վրա: Ֆարեդայի դեպքում դա մի հնարավորություն է՝ ստեղծել եկամուտ եւ դառնալ Բելառուսի հասարակության ավելի ակտիվ ու գնահատված անդամ:

Ամիսներ տեւած նախապատրաստությունից, շուկայի ուսումնասիրությունից եւ Աշխատանքի նախարարությանը, տեղացի գնահատողներին եւ ՄԱԿ ՓԳՀ-ին ներկայացնելուց հետո՝ ձեռնարկության բիզնես-պլանը հաստատվեց: ՄԱԿ ՓԳՀ-ի ներդրումն այս նախագծում կազմելու է 68,000 ԱՄՆ դոլար. այն կօգտագործվի տեխնիկական սարքավորումների գնման, տարածքի վարձակալության եւ առաջին չորս ամիսների ընթացիկ ծախսերի համար: Դրանից հետո ակնկալվում է, որ «Սպիտակեղենի կայսրությունը» կդառնա ինֆրաձայնածածկվող ձեռնարկություն՝ որպես փախստականների կողմից ղեկավարվող հերթական բելառուսական համայնքային բիզնես:

Իլիյազը՝ տեղական աֆղանցի համայնքի առաջնորդի որդին, առանցֆային դեր խաղաց «Սպիտակեղենի կայսրության» հայտի հաջողության մեջ, եւ ղեկավարելու է այս ձեռնարկությունը: Նա մեծացել է Բելառուսում եւ կամքի դեր է կատարում աֆղանցի համայնքի տարեց անդամների եւ բելառուսական լայն հանրության միջև:

«ԱՅՆ ՊԱՀԻՑ, ԵՐԲ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ ԿԱՊԻ ՄԵՋ ԵՆ ՄՏՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ, ՆՐԱՆՑ ՏՐՎՈՂ ԱՌԱՋԻՆ ՀԱՐՑԸ ՀԵՏԵՎՅԱԼՆ Է՝ «ԱՐԴՅՈՒՔ ԴՈՒՔ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՔ, ԵՎ ՈՐՏԵ՞Ղ ԵՔ ԱՇԽԱՏՈՒՄ»: ԵԹԵ ՆՐԱՆՔ ԲԱՆԿԻՑ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ, ԱՅԴ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐՑՆՈՒՄ Է՝ «ԱՐԴՅՈՒՔ ԴՈՒՔ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՔ, ԵՎ ՈՐՏԵ՞Ղ ԵՔ ԱՇԽԱՏՈՒՄ. Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵՆ ՎԱՐԿԻ ԵՐԱՇԽԱՎՈՐ»: ԵԹԵ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ ՓՈՂ ՈՒՆԵՆԱՆ, ՆՐԱՆՔ Ի ՎԻՃԱԿԻ ԿԼԻՆԵՆ ՕԳՆԵՆ ԻՐԵՆՑ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ, ՆՐԱՆՔ ԿԿԱՐՈՂԱՆԱՆ

ՕԳՆԵԼ ԻՐԵՆՑ ԸՆՏԱՆԻՔԻՆ: ԱՅՍ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԴԱՐՊԱՍ Է»:

Իլիյազ, սնօրեն, «Սպիտակեղենի կայսրություն»

Նկարի գրառումը. *Չորան ցուցադրում է Մանուկների եւ դեռահասների «Էվրիկա» կենտրոնի օգնությամբ թիվ 136 դպրոցում սովորելու տարիներին իր ստացած բազմաթիվ հավաստագրերից երկուսը: Այժմ Չորան հյւէջում հաշվապահություն ուսանելու 3-րդ կուրսում է. նա իր ընտանիքի հպարտությունն է:*

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

Ոչ թե փախստականներ, այլ պարզապես մարդիկ

Երիտասարդ սերնդի առջև ծառայած ինտեգրման մարտահրավերները նույնպես լուծում են ստանում: Բելառուսը նշանակալի ուժադրություն է դարձնում փախստական երեխաներին, որպեսզի նրանք ունենան կրթությունից օգտվելու եւ հաջողության հասնելու նույն հնարավորությունները, ինչ տեղացիները:

Մինսկի Ֆրանգեզնսկի թաղամասում գտնվող թիվ 136 դպրոցը, որտեղ սովորում է ապաստան ստացած եւ փախստական 200 երեխա, օրինակելի է: Այս երեխաների համար կրթության գուրգուտու համակարգ ստեղծելու փոխարեն, Կրթության նախարարությունը եւ տեղական իշխանությունները սերտորեն գործակցում են ՄԱԿ ՓԳՀ-ի եւ իրականացնող գործընկերոջ՝ Մանուկների եւ դեռահասների «Էվրիկա» կենտրոնի («Էվրիկա» ՄՊԿ) հետ՝ ապահովելու, որ երիտասարդ փախստականները հնարավորություն ունենան հեշտությամբ ինտեգրվել Բելառուսի կրթական համակարգին:

Թիվ 136 դպրոցում բացվել են ոռուսաց լեզվի լրացուցիչ դասեր եւ ուսումնական խմբեր՝ փախստական երեխաներին օգնելու՝ ետ չմնալ իրենց բելառուս հասակակիցներից: Առաջարկվում են նաեւ աֆդաներենի եւ աֆդանական մշակույթի դասեր, որոնք նպաստում են միջհամայնային փոխըմբռնմանը: «Էվրիկա» ՄՊԿ-ն կազմակերպել է նաեւ լայն ժողովրդականություն վայելող մի արտադպրոցական ակումբ երեխաների եւ նրանց ընտանիքների համար՝ առաջարկելով խորհրդատվական ծառայություն դրա կարիքն ունեցողներին:

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

Տասնհինգամյա Լիդան «Էվրիկայի» կողմից տրամադրված կրթական եւ հոգեկան աջակցության շնորհիվ «ծաղկել» է:

Լիդան առաջին անգամ տեղափոխվել է երկու տարեկան հասակում: Իրանի Իսլամական Հանրապետությունը, Չեխիայի Հանրապետությունը, Ռուսաստանը եւ Պակիստանը ընդամենը մի քանիսն են այն երկրներից, որոնց միջով ապաստան որոնելիս անցնելը կարողանում է մտաբերել Լիդան: 2005 թվականին նրանց

ընտանիքին Բելառուսում տրվել է փախստականի կարգավիճակ, եւ նրանք վերջապէս կարողացել են հաստատուիլ: Լիդան վայելում է այն կայունությունն ու անվտանգությունը, որ դա բերել է իր կյանք: Ռուսաց լեզվի դասընթացները հետաացրել են նրա անցումը դեպի դպրոցական կյանք, իսկ աֆղաներենի դասընթացները նրան հիշեցնում են իր ժառանգության մասին: Լիդայի որոշ բելառուս ընկերներ նույնպէս հաճախում են աֆղաներենի դասերին:

Լիդայի համար, ինչպէս շատ այլ երեխաների, ովքեր նույն եղանակով ներգրավվել են դպրոցական կյանքին, «փախստականի» ինքնությունն այսօր անտեղի է: Նա ինքն իրեն տեսնում է նույնպիսին, ինչպիսին մնացած բոլորն են. ոչ թէ որպէս փախստական, այլ որպէս Բելառուսի բաղաձայն: Ինչ վերաբերում է նրա ապագային, ինչքան էլ դժվար լինի, Լիդան ցանկանում է սովորել բժշկագիտություն. «Կրթությունը եւ հաջողությունը կախված են բեզմից, բո աշխատանքից եւ գիտելիքից: Փողը կարող է օգնել կրթություն ստանալու հարցում, սակայն նախ եւ առաջ ամեն ինչ կախված է ինձնից»:

Երկու պատանի ընկերներ եւ մոլի ֆուտբոլիստներ, մեկը՝ վրացի, մյուսը՝ բելառուս, իրենց հաջող ինտեգրման գաղտնիքը համարում են «ընկերությունը». «Ընկերությունը եւ ընդհանուր հետաքրքրությունները», - ասում է նրանցից մեկը: «Ինչպէս մենք եւ ֆուտբոլը», - միջամտում է մյուսը: Ապա նրանք վազում են՝ շարունակելու իրենց խաղը:

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՁՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՎԱԾ ԵՆ ՔԵԶՆԻՑ, ՔՈ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԵՎ ԳԻՏԵԼԻՔԻՑ: ՓՈՂԸ ԿԱՐՈՂ Է ՕԳՆԵԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ, ՍԱԿԱՅՆ ՆԱԽ ԵՎ ԱՌԱՋ ԱՄԵՆ ԻՆՉ ԿԱՆՎԱԾ Է ԻՆՉՆԻՑ»:

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

Սիւեա Լեոնե.

«Բողէ սեյա»՝ բոլորս մեկ ընտանիք ենք

Համատեքստը

Սիւեա Լեոնեի Հանրապետությունը դեպի խաղաղություն եւ զարգացում տանող հանապառիսին է՝ տասնամյա ավերիչ հակամարտությունից հետո, որն ավարտվեց 2002-ին: Կառավարությունը հենվում է շարունակվող միջազգային աջակցության վրա, որպէսզի ի վիճակի լինի դիմագրավել երկրի առջեւ ծառայած հսկայական մարտահրավերները: Սիւեա Լեոնեի ՄԱԿ-ի Մարդկային զարգացման համարվով երկրների ցուցակի ամենաստորին հատվածում է: Բնակչության 60 տոկոսից ավելին ֆինանսապէս անկարող է սնվել օրական մեկ անգամից ավելի, իսկ երիտասարդների 70 տոկոսը գործազուրկ է:

Հակամարտության տարիներին հազարավոր մարդիկ լճեցին Սիեռա Լեոնեն, եւ նրանցից ավելի քան 3,000-ը ապաստան գտան հարեւան Լիբերիայի Հանրապետությունում, մի երկիր, որն ինքն էլ ներգաղթյալ գաղթական փախստական պատերազմի մեջ: Լիբերիական հակամարտության գագաթնակետին 60,000 լիբերիացի փախստական ապաստան գտան Սիեռա Լեոնեում: Կամավոր հայրենադարձությունից հետո մոտավորապես 9,000 լիբերիացիներ մնում են Սիեռա Լեոնեում եւ իրենց վիեակի երկարաժամկետ լուծումների կարիք ունեն:

ՄԱԿ ՓԳՀ-ն աշխատում է Սիեռա Լեոնեի կառավարության հետ՝ լիբերիացի փախստականների համար երկարաժամկետ լուծումներ գտնելու համար, որպես Արեւմտյան Աֆրիկայում մոտ 79,000 լիբերիացի եւ 14,000 սիեռալեոնեացի փախստականների տեղական ինտեգրման տարածաշրջանային նախաձեռնության մի մաս: ՄԱԿ ՓԳՀ-ի աջակցությամբ՝ Սիեռա Լեոնեի կառավարությունը 2008 թվականին հաստատեց լիբերիացի փախստականների ինֆնաբավության եւ տեղական ինտեգրման ազգային ռազմավարությունը: Ներկայում այն իրականացման փուլում է, եւ դրա գլխավոր հիմնադրույթներն են խորհրդատվությունը, հողի սեփականությանն առնչվող հիմնախնդիրները ստեղծագործաբար լուծելը եւ խաղաղ գոյակցությունը:

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

Փոխադարձության սկզբունքը

Արեւելյան Սիեռա Լեոնեի Քենեմա ֆաղաֆում գտնվող՝ համաժողովների համար նախատեսված ավանդական շրջանաձև սենյակում տեղի է ունենում բուռն ֆննարկում տեղական ինտեգրման օգուտների շուրջ: Քննարկմանը մասնակցում են Գերագույն առաջնորդը, ֆաղաֆապետը, Առողջապահության նախարարության եւ Սոցիալական հարցերի նախարարության, Սոցիալական գործողությունների ազգային հանձնաժողովի (ՍԳԱՀ, պետական այն վարչությունը, որը պատասխանատու է փախստականների համար), «ԿԱՄԻՏԱՍ»-ի (իրականացնող տեղական գործընկեր) եւ ՄԱԿ ՓԳՀ-ի ներկայացուցիչները: Մթնոլորտը ջերմ եւ հարգալից է: Բոլորը միմյանց լավ են հանաչում եւ փոք տեղյակ են ֆննարկվող թեմայի մասին:

Նման կարգի հավաքույթը Սիեռա Լեոնեում եզակի երևույթ չէ: Տեղական ինտեգրումն այստեղ իսկապես գործընկերություն է ազգային եւ տեղական իշխանությունների, ընդունող համայնքների եւ միջազգային գործակալությունների միջեւ, որոնք միասին աշխատում են սիեռալեոնեացիների եւ նրանց լիբերիացի «եղբայրների եւ քույրերի» ընդհանուր ապագայի համար: Այս նորարարական ծրագրի շրջանակներում տեղական եւ ազգային մակարդակները ներկայացնող շահագրգիռ կողմերը ամիսը մեկ անգամ հանդիպում են, որպեսզի ֆննարկեն տարբեր հարցեր եւ խնդիրներ ու գնահատեն տեղական ինտեգրմանն ուղղված ծրագրերի գործնական իրականացմանն առնչվող արձագանքները, որոնք ստացվում են մոնիտորինգի միջոցով:

Որպես գերագույն առաջնորդ եւ Խորհրդարանի պատգամավոր, Մոհամեդ Դաֆիե Բենյան ազգային մակարդակում ներկայացնում է 15 տեղացի առաջնորդների, ինչպես նաեւ զբաղվում է իր առաջնորդության ներքո գտնվող տեղական համայնքների ֆալաֆացիների կարիքներով: Նա փախստականներին նույնպես համարում է իր ժողովուրդը:

«ՄԵՆՔ ՆՐԱՆՑ ԿՈՉՈՒՄ ԵՆՔ «ՄԱ ԲՈՂԵ»», - ԲԱՑԱՏՐՈՒՄ ԷՆԱ: «ԴԱ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԷՆ «ԻՄ ԸՆՏԱՆԻՔ», ԱՅՍԻՆՔՆ՝ ԲՈՂՈՐՍ ՄԵԿ ԸՆՏԱՆԻՔ ԵՆՔ: ՄԵՐ ՄԻՉԵՎ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ: ԻՐԱԿԱՆՈՒՄ ՄԵՆՔ ՉԱՐՄԱՆՈՒՄ ԷՒՆՔ, ԹԵ ԻՆՉՈՒ ԱՅՍՔԱՆ ԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿ ՊԱՀԱՆՉՎԵՑ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՁԵՎԱԿԵՐՊԵՆ ԱՅՆ, ԻՆՉ ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՅՍՊԵՍ ԹԵ ԱՅՆՊԵՍ ԱՐԴԵՆ ՏԵՂԻ ԷՐ ՈՒՆԵՆՈՒՄ»:

Այս տարածաշրջանում գոյություն ունի փոխադարձության ոգի, որը հիմնված է սերտ մշակութային եւ էթնիկական կապերի եւ պատերազմի գործած ավերածությունների ընդհանուր փորձի վրա:

«ՄԱՐԴԻԿ ՃԱՆԱՉԵՆ ԵՆ ՏԱՌԱՊԱՆՔԸ, ԵՎ ԴԱ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՉԷ: ՆՐԱՆՔ ԳԻՏԵՆ, ԹԵ ԻՆՉ ԷՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՓՆՏԵՆ ԱՊԱՀՈՎ ՀԱՆԳԻՎԱՆ. ԿԱՐԻՔ ՉԿԱ ԴԱ ՆՐԱՆՑ ԵՐԿԱՐ ԲԱՑԱՏՐԵՆ»:

Վալենտին Թաբաբա, ՄԱԿ ՓԳՀ ներկայացուցիչ, Սիեռա Լեոնե

Ռազմավարության մշակում. գործընկերությունների կարևորությունը

Սիեռա Լեոնեի կառավարությունը չափազանց լրջորեն է մոտենում փախստականների վերաբերյալ իր ստանձնած միջազգային պարտավորություններին: Տեղական ինտեգրումը, որպես երկարաժամկետ լուծում, այնուամենայնիվ, նոր գաղափար էր նրանց համար, մինչև ՄԱԿ ՓԳՀ-ի հետ ֆինանսականների շարքի անցկացումը, տեղեկությունների փոխանակումը մայրցամաքային հարևանների հետ եւ փորձական ուսումնասիրությունները չխթանեցին տեղական ինտեգրման մոդելի մշակումը՝ որպես առաջընթացի ընտրված ուղի:

2007 թվականին ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից կազմակերպված հետազոտական արշավը դեպի Ուգանդա ՍԳԱՀ ներկայացուցիչներին թույլ տվեց ուսումնասիրել եւ գնահատել ինֆրաբնակչության հասնելու՝ այդ երկրի ռազմավարությունները, որոնք նաեւ կարող էին ուղի հարթել Սիեռա Լեոնեում փախստականների տեղական ինտեգրման համար: Վերադառնալուց հետո ՍԳԱՀ ներկայացուցիչները ստեղծեցին տարբեր փորձական մեխանիզմներ՝ փոփոխելով ընտանիքների տրամադրելու աջակցություն նրանց ապաստանի եւ կենսապայմանների ապահովման համար: Այս համակարգերը ՍԳԱՀ-ին թույլ տվեցին պարզել, թե ինչն է ամենից արդյունավետորեն աշխատել Սիեռա Լեոնեի համատեքստում: Փորձարկումները ցույց տվեցին նման մոտեցման հնարավոր օգուտները ողջ համայնքի համար, եւ կառավարությունն ընդլայնեց մեխանիզմի

գործողությունը եւ ներառեց տեղական ինտեգրումը երկրի ողջ տարածքում՝ հիմնվելով քաղաքացիական շարժումների վրա: Սիեռա Լեոնեում ինտեգրված փախստականներն ունեն աշխատանքի, առողջության եւ կրթության միևնույն իրավունքները, ինչ տեղացիները՝ փախարենը հարգելով տեղական կանոններն ու սովորույթները: Այժմ աջակցություն է տրամադրվում մարդկանց, որպեսզի նրանք կառուցեն նոր տներ, եւ ներդրվել են միկրոֆինանսավորման եւ կենսապահովման միջոցների ստեղծման նոր մեխանիզմներ:

Հենց սկզբից՝ մոտեցումը տեղական ինտեգրման մշակմանը եւ իրականացմանը հիմնված է եղել ազգային եւ տեղական գործընկերների հետ խորհրդակցելու վրա՝ որոշումների կայացման գործընթացին ներգրավելով հիմնական շահագրգիռ կողմերին:

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

«ԽՈՐՀՐԴԱԿՑԵԼՆ ՈՒՆԻ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ: ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ Է, ՈՐ ԱՅՍ ՄԱՐԴԱԿԱՆՑ ՀԵՏ Է ԼԻՆԵԼՈՒ ԻՐԵՆՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ: ԵԹԵ ՆՐԱՆՔ ՁԵՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՓԱՆՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՔԵԶ՝ ՈՐՊԵՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ՈՒՂՂԱԿԻ ԳՆԱ ԱՅՆՏԵՂ՝ ՍՏԻՊԵԼՈՒ ՆՐԱՆՑ ԱՆԵԼ ԴԱ. ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵԽԱՆԻԶՄՆ ԻՆՔՆԻՆ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ ՁԻ ՈՒՆԵՆԱ»:

Ջեյմս Հարդինգ, Ծրագրերի ղեկավար, Սոցիալական գործողությունների ազգային հանձնաժողով (ՄԳԱՀ)

Համայնքի տեսանկյունը

Յավեյման փոքրիկ գյուղ է Գերագույն առաջնորդ Բենյայի ղեկավարության ներքո գտնվող Փոքր Բոյում: Այս գյուղն ընդունել է մեծ թվով լիբերիացիներին, ովքեր ընտրել են տեղական ինտեգրումը: Այստեղ նրանց չեն դիտում որպես փախստականներին, այլ որպես համայնքի արժեքավոր անդամներին: Գյուղը մեծ վնաս է կրել Սիեռա Լեոնեում պատերազմի ընթացքում: Տներ են ավերվել, մշակաբույսերի դաշտերը՝ այրվել, եւ բազմաթիվ մարդիկ սպանվել են կամ լքել այդ շրջանը:

«Այն օրվանից, ինչ այս մարդիկ [փախստականները] եկան, համայնքը վերահաստատեց իր ստանդարտները: Հաստատություններ, որոնք այստեղ երբեք չեն եղել, այժմ այստեղ են, եւ դրանց ներկայությունը մեզ օգնում է վերականգնվել այն տրավմայից հետո, որի միջով անցել ենք: Այսպիսով, այժմ մենք իսկապես այս մարդկանց համարում ենք մեզնից մեկը»:

Մորի, քաղաքացիական խոսակալ

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

Լիբերիացիները եւ սիեռալեոնեացիները այս զբաղված գյուղատնտեսական համայնքում ապրում եւ աշխատում են կողք կողքի, եւ համայնքն ակներեսաբար բարգավաճում է: Քանի որ այժմ բերքահավաքի ժամանակ է, երիտասարդների մեծամասնությունը դաշտերում աշխատում է կամ օգտագործում համայնքին պատկանող բրնձի սարքավորումը, որպեսզի շուկա տանելու նպատակով աղա բրինձը: Տեղացիները հավատում են, որ գործընթացի հաջողությունը պայմանավորված է ինտեգրումն ամենավաղ փուլերից սկսելու մասին որոշումների կայացմանը ամբողջ համայնքի ներգրավմամբ:

«ՆԱԽՔԱՆ ՓԱԽՍՏԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ ԿԹՈՂՆԵԻՆ ԻՐԵՆՑ ԶԱՄԲԱՐՆԵՐԸ, ՈՐՊԵՍՁԻ ԳԱՅԻՆ ԱՅՍՏԵՂ, ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏՆԻՑ ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ ԳՆԱՑ ՆՐԱՆՑ ՀԱՆԴԻՊԵԼՈՒ, ՈՐ ՀԱՍԿԱՆԱՅԻՆՔ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԻԱՍԻՆ ԱՊՐԵԼՈՒ ԱՅՍ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ: ՍԱ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԲԱԶՄԱԹԻՎ ԱՆԳԱՄ՝ ՄԻՆՉԵՎ ՆՐԱՆՔ ԵԿԱՆ ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔ, ԵՎ ԴԱ ՄԵՐ ՄԻՉԵՎ ԼԱՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱՎ: ԱՅՍՕՐ ԴՈՒՔ ՉԵՔ ԿԱՐՈՂԱՆԱ ԱՍԵԼ՝ ՈՎ Է՛ ՓԱԽՍՏԱԿԱՆԸ ԵՎ ՈՎ Է՛ ԸՆԴՈՒՆՈՂԸ»:

Ջենեբա, հյուրընկալող Յավեյմա համայնքի անդամ

Տեղական ինտեգրման համապարփակ ռազմավարության ներդրման դրական արդյունքներն արդեն տեսանելի են Յավեյմայի նման համայնքների համար: Փախստականներն իրենց տնտեսական եւ սոցիալական նպաստն են բերում տեղական համայնքին: Նրանք հարկեր են վճարում եւ հարեւանների հետ կիսում նոր հմտություններն եւ ռեսուրսները: Տեղական ինտեգրումը ներդրվում է համայնքաին գարգացման միջոցով, որից շահում են բոլորը: Սա հանգեցրել է այնպիսի շոշափելի օգուտների, ինչպիսիք են նոր հորերը, որոնք մաքուր ջուր են ապահովում տեղացիների եւ փախստականների համար, եւ բրնձի աղացները եւ վերամշակման սարքավորումները, որոնք մեծացնում են ամբողջ համայնքի եկամուտը: Ինտեգրվող փախստականներին, ինչպես նաեւ ընդունող համայնքի ամենախոցելի անդամների մինչեւ 10 տոկոսին տրամադրվում է բնակարանային աջակցություն, որպեսզի նրանք ի վիճակի լինեն կառուցել նոր տներ:

Այս համայնքում մարդկանց միջեւ նաեւ ձեւավորվել են ընկերության եւ փոխադարձ աջակցության ուժեղ կապեր:

«ԿԻՆՍ ՄԱՀԱՑԵԼ Է՛ ԱՆՑՅԱԼ ՏԱՐԻ, ԻՍԿ ՀԵՏՈ՝ ՈՐԴԻՍ: ԱՅՍՏԵՂ ՄԱՐԴԻԿ ՕԳՆԵՑԻՆ ԻՆՉ: ՄՆԱՑԵԼ ԵՆՔ ՄԻԱՅՆ ԵՍ ՈՒ ԱՂՋԻԿՍ: ԱՅՍ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՄԱՆ Է՛ ԸՆՏԱՆԻՔԻ»:

Սահր, փախստականների առաջնորդ, Յավեյմա

Խորհրդակցությունները եւ գործընկերությունները նաեւ առանցքային նշանակություն են ունեցել մարզային եւ տեղական մակարդակներում առողջապահական եւ կրթական ծառայություններին առաջնային կարեւորություն տալու գործում: Որպես այս գործընթացի մի մաս, բարելավվում են տեղական ենթակառուցվածքները, քանի որ կառուցվում կամ վերականգնվում են դպրոցները եւ հիվանդանոցները:

Վերջապես, այս գործընկերություններն ուղի են հարթել ինտեգրման գործընթացի հնարավոր խոչընդոտներին նորարարական լուծումներ տալու համար:

Ինֆրաբաղությունը հարակայուն դարձնելը. Ամեն ինչ հանգում է հողին

«ԻՄ ԿԱՐԾԻՔՈՎ, ԽՆԴԻՐԸ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆՆ Է. ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԲՆՈՒՄ Է ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ»:

Վերոնիկա Մոդեյ-Էբի, Պաշտպանության հարցերով ավագ պատասխանատու, ՄԱԿ ՓԳՀ, Սիեռա Լեոնե

Այնպիսի չֆավոր երկրում, ինչպիսին Սիեռա Լեոնեն է, փախստականների ինֆրաբաղությունը եւ իրենց ընդունած համայնքներին նրանց ակտիվ ներգրավումը տեղական ինտեգրումը հնարավոր, առավել եւս՝ հարակայուն դարձնելու հարցում ունեն վեոյրուց նշանակություն: Գյուղատնտեսության վրա հիմնված տնտեսության դեպքում ինֆրաբաղությունը մեծապես կախված է հողի հասանելիությունից, ինչը հողի սեփականության հարցը դարձնում է փախստականներին ուղղված ծրագրերում ներգրավված շահագրգիռ բոլոր կողմերի առանցքային մտահոգությունը: Հողի անվտանգությունը նույնպես փախստականների կողմից ինտեգրման տեսակետից խթանի դեր է կատարում, քանի որ այն նրանց ընձեռում է հասարակությանը շոշափելի մասնակցություն ունենալու հնարավորություն:

Սիեռա Լեոնեում, ի տարբերություն տարածաբանի բազմաթիվ այլ երկրների, գյուղական շրջաններում հողի առկայությունը խնդիր չէ: Հողի սեփականությունը, այդուհանդերձ, ավելի բարդ հարց է: Քաղաքներից դուրս գտնվող հողերի մեծ մասը գտնվում է համայնքային կառավարման ներքո, եւ որոշումները կայացվում են հողատերերի, նրանց համայնքի եւ տեղական առաջնորդների կողմից: Տեղական ինտեգրման գործընթացին օժանդակելու նպատակով՝ ՄԱԿ ՓԳՀ-ի պաշտպանության հարցերով ավագ պատասխանատուները աշխատեցին ՍԳԱՀ-ի, առաջնորդների եւ տեղական իշխանությունների հետ, որպեսզի լուծում գտնեն գործող իրավական համակարգում փախստականների համար հողի հասանելիություն ապահովելու խնդիր: Այնուհետեւ նրանք դիմեցին ժողովրդի աջակցությանը՝ իրականացումն ապահովելու համար:

Քենեմա մարզի ողջ տարածքում տեղական համայնքներից ստացված արձագանքները գերազանցապես դրական էին: Փախստականների հողի սեփականության իրավունք տվող առաջարկը Փոքր Բո երկրամասում

գտնվող տեղական համայնքին ներկայացնելուց կարճ ժամանակ անց ներկայացուցիչները կազմեցին պատվիրակություն՝ այցելելու Գերագույն առաջնորդ Բենյամին տուն եւ առաջարկելու լիակատար աջակցություն:

«ՆՐԱՆՔ ԱՍԱՑԻՆ՝ «ԱՌԱՋՆՈՐԴ, ՄԵՐ ԵՂԲԱՅՐՆԵՐՆ ՈՒ ՔՈՒՅՐԵՐԸ ԽՆԴԻՆԵՂ ԵՆ ՄԵՐ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ՄԵՆՔ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆՔ ՕԳՆԵՂ ՆՐԱՆՑ»: ԴՐԱ ԴԻՄԱՑ ՆՐԱՆՔ ՈԶԻՂ ԶՈՒԶԵՑԻՆ»:

Բացատրում է առաջնորդ Բենյամին:

Այս գործընթացի արդյունքը տեղական իշխանությունների, հողատերերի եւ փախստականների միջեւ հողային իրավական համաձայնագրերի շարքն է, որը յուրաքանչյուր ինտեգրվող փախստականին մի հողակտորի նկատմամբ օրինական իրավունք է տալիս՝ անվճար հիմունքներով եւ այնքան ժամանակով, որքան նրանք կամ նրանց ժառանգները կորուստ են ապրել Սիեռա Լեոնեում: Այս կյանքեր փոխող փաստաթուղթը փախստականներին տալիս է պատկանելության զգացում, իրավագործում նրանց՝ դառնալու իրենց տեղական համայնքի լիարժեք անդամներ, երաշխավորում է նրանց երեխաների ժառանգությունը: ՍԳԱՀ-ից եւ ՄԱԿ ՓԳՀ-ից ստացված աջակցության շնորհիվ նրանք կառուցել են ապաստաններ եւ մշակում են հողը, անեցնում են մշակաբույսեր՝ իրենց ընտանիքներին կերակրելու եւ վաճառելու նպատակով, որպեսզի իրենց նպաստը բերեն համայնքային ֆունդին: Հաջողության հասնելու միջոցով փախստականներն օգուտ են բերում այն համայնքներին, որոնք իրենց տրամադրել են հողի մշտական օգտագործման իրավունք՝ յուրաքանչյուրին հնարավորություն տալով բարգավաճել:

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

Վերադարձնելը. փոքրիկ ֆայլերը հեռուն են տանում

Փիթերը³ այս հողային համաձայնագրի շահառուներից մեկն է եւ իրեն տրամադրված հողի վրա մի նոր տուն է կառուցել ՄԱԿ ՓԳՀ-ի՝ ապաստան տրամադրող ծրագրի օգնությամբ: Նա խորապես գնահատում է «Էմանուել ֆեռուն»՝ տեղացի հողատիրոջը, ով հողակտորներ է տրամադրել այստեղ բնակվող բազմաթիվ նախկին փախստականների: Հողային համաձայնագրի այս մեխանիզմի շնորհիվ Փիթերն զգում է, որ այժմ որոշակի անվտանգություն ունի: Նա ստեղծել է մի բանջարանոց եւ մանիոկայի (կասավա) փոքրիկ պլանտացիա, որտեղ ստացվող բերքի շնորհիվ կերակրում է իր նոր ընտանիքը:

Փիթերը Սիեռա Լեոնե է գաղթել Լիբերիայից, 2002 թվականին, այն բանից հետո, երբ նրա աչքերի առջեւ սպանել են կնոջն ու որդուն, եւ երբ նրա կյանքն էլ էր վտանգի տակ: Կատարվածի պատճառով Փիթերը

³ Այս անձի անունը փոխվել է:

համարում է, որ այլևս երբեք չի կարող վերադառնալ Լիբերիա: Նա աստիճանաբար նոր կյանք է սկսում: Փիթերը սեր է գտել, կրկին ամուսնացել, եւ 2008 թվականին որոշել՝ ընտրել տեղական ինտեգրումն այս գյուղում:

Տեղական ինտեգրումը Փիթերին հնարավորություն է տվել ստեղծել նոր կյանք եւ դառնալ այն համայնքի արժեքավոր անդամը, որտեղ ապրում եւ աշխատում է: Ժամանելով Սիեռա Լեոնե՝ ՄԱԿ ՓԳՀ-ի ծրագրի միջոցով նա ուսանել է, որպեսզի դառնա ուսուցիչ: Ներկայումս Փիթերն աշխատում է շաբաթական չորս օր եւ դասավանդում 25 երեխաներից բաղկացած մի աշխույժ դասարանում, կառավարության կողմից ֆինանսավորվող տարրական դպրոցում, որն ունի ավելի քան 800 աշակերտ, ներառյալ՝ ընդունող համայնքը ներկայացնող եւ նախկին փախստական երեխաները: Դասավանդելը Փիթերի սիրելի զբաղմունքն է: Նրա դեմքը լուսավորվում է, երբ նկարագրում է, թե ուսուցանելն ինչ է նշանակում իր համար:

«ԵՄ ԻՍԿԱՊԵՍ ԵՐՋԱՆԻԿ ԵՄ, ՈՐՈՎՇԵՏԵՎ ՆՐԱՆՔ ԲՈՂՈՐԸ ՍԻՐՈՒՄ ԵՆ ԻՆՁ, ԵՎ ԵՍ Է՛՛՛ ՆՐԱՆՑ ԵՄ ՍԻՐՈՒՄ, ԵՎ ՄԵՆՔ ՈՒՐԱԽ ԺԱՄԱՆԱԿ ԵՆՔ ԱՆՑԿԱՑՆՈՒՄ ՄԻԱՍԻՆ, ԿԱՏԱԿՈՒՄ ԵՆՔ ՄԻԱՍԻՆ: ԻՆՁ ԴԱ ՇԱՏ Է՛ ԴՈՒՐ ԳԱԼԻՍ»:

Դպրոցը, ինչպես Սիեռա Լեոնեում գործող բազմաթիվ այլ դպրոցներ, ունի որակյալ ուսուցիչների ծայրահեղ կարիք, սակայն ներկայումս այս կարեւորագույն աշխատանքի համար շատ փոքր գումար կա: Ինչպես բազմաթիվ այլ նախկին փախստականներ, Փիթերը վստահ է, որ կարեւոր է սեփական նպաստը բերել այն համայնքին, որը նրան ընդունել է, եւ այդ պատճառով աշխատում է անվճար, սակայն հույս ունի, որ մի օր այդ վիճակը կփոխվի: Սա նշանակում է, որ այդուհանդերձ նա ստիպված է եղել գտնել իր նոր ընտանիքի կարիքները հոգալու այլ եղանակներ: Փիթերն օգտագործել է ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից տրամադրված մեկնարկային ֆինանսական միջոցները՝ հիմնելու մի փոքր ձեռնարկություն, որը զբաղվում է շաքարի, արմավի ձեթի եւ իր կնոջ ու քրոջ կողմից պատրաստվող՝ ֆենոլային օճառի գնդիկների առուվաճառով: Յուրաքանչյուր ուրբաթ օր, դասավանդումից ազատ նրա օրը, նրանք այս ապրանքները վաճառում են շուկայում: Նշված սարատեսակ ձեռնարկումներից նրանք բավարար գումար են վաստակում, որպեսզի գոյատևեն եւ ապագայի փոքրիկ ծրագրեր կազմեն:

Միջազգային հանրությունից ստացվող եւ գարգացմանն ուղղվող օժանդակության կարեւորությունը

Տեղական ինտեգրումը Սիեռա Լեոնեում չափազանց հաջող եւ երկկողմանիորեն շահավետ ուղղավարություն է: Այս տեսական լուծումը մշակվել է, որպեսզի նախկին փախստականներին հնարավորություն տա լինել ինքնաբավ եւ «ինքնուրույն սավառնել» այն բանից հետո, երբ նրանք դառնում են իրենց նոր տան քաղաքացիներ կամ մշտական բնակիչներ:

Երկրի համար սա մի պարբերական փուլ է: Միջազգային հանրությունից ստացվող շարունակական աջակցությունը եւ գարգացմանն ուղղված գործընկերությունները կենսական նշանակություն ունեն ՄԱԿ ՓԳՀ-ին՝ համայնքներին եւ փախստականներին տեղական ինտեգրման գործընթացում աջակցելու հնարավորություն տալու եւ դեպի խաղաղություն անցման այս ժամանակաշրջանում կառավարությանն օժանդակելու տեսակետից: Ասվածը հատկապես ակնառու է կրթության եւ առողջապահության ոլորտներում:

Տոբանդա հիվանդանոց, Քենենա մարզ

Վաղ կեսօր է, եւ Տոբանդա հիվանդանոցի տարածքում հորդ անձրեւ է: Մոտ 20 հոգի հանգիստ նստած է՝ սպասելով Ջոզեֆուս Քենմիբելի՝ առողջապահության հարցերով համայնքային պատասխանատուի հետ հանդիպմանը: Սիեռա Լեոնեում փախստականների ճգնաժամի ամենալարված ժամանակաշրջանում այս հիվանդանոցը կառուցվել է ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից, իսկ վերջերս այն փոխանցվել է կառավարությանը եւ ներկայում առողջապահական հիմնական հաստատություն է, որը ծառայություններ է մատուցում փախստականներին, նախկին փախստականներին եւ սիեռալեոնեացիներին՝ որպես տեղական ինտեգրման ռազմավարության բաղադրիչ: Այն մի խոշոր հիվանդանոց է, որն սպասարկում է 8,000 տեղացիների: Հիվանդանոցի կազմի մեջ են մտնում խորհրդատվության երեք կաբինետներ, դեղատուն, ծնարան, մոր եւ մանկան առողջության բաժանմունք, մեկուսացման եւ կարանտինի բաժանմունք, ընդհանուր բաժանմունք եւ պատվաստման կենտրոն: Շնորհիվ ՄԱԿ ՓԳՀ-ի մի բնապահպանական նախաձեռնության՝ այն ամբողջությամբ գործում է արեգակի էներգիայով: Այն ժամանակ, երբ ՄԱԿ ՓԳՀ-ն ավարտին է հասցնում Առողջապահության նախարարությանը ծրագրված փոխանցման գործընթացը, հիվանդանոցը պահելը դարձել է լուրջ ճիգեր պահանջող աշխատանք: Աշխատակազմը աշխատում է ոչ համարժեք ծանրաբեռնվածությամբ, իսկ հիվանդանոցը մաշված տեսք ունի:

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քեննի 2010

«ԱՅՍ ՉԱՓԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ՀԱՄԱՐ ՄԵՆՔ ԱՌՆՎԱԶՆ ՎԵՅ ԱՇԽԱՏՈՂԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆՔ, ՈՐՊԵՍԶԻ ՊԱՐԶԱՊԵՍ ԵՄՈՒՆԱԿԵՆՔ ԳՈՐԾԵԼ: ՆԵՐԿԱՅՈՒՄ ԱՅՍՏԵՂ ԱՇԽԱՏՈՒՄ Է ԸՆԴԱՄԵՆԸ ԵՐԵՔ ՀՈԳԻ, ՈՐՈՆՑԻՑ ՄԻԱՅՆ ԵՐԿՈՒՍՆ ԵՆ ՎՃԱՐՎՈՒՄ»:

Ջոզեֆուս Քենմիբել, առողջապահության հարցերով համայնքային պատասխանատու

Ջոզեֆուսը վերաբերում է, ինչպես որ մոր եւ մանկան առողջության հարցերով պատասխանատուն, ովքեր աշխատանքի են վերցվել կառավարության՝ մանկական մահացության կրճատմանն ուղղված ռազմավարության շրջանակներում: Ամառե Մուստաֆեն, ով նույնպես տեղացի սիեռալեոնեացի է, պատվաստման հարցերով պատասխանատուն է: Վերջին 12 տարվա ընթացքում նա աշխատել է այս հիվանդանոցում, սակայն ներկայում աշխատում է անվերաբ հիմունքներով:

«ՍԱ ԿԱՐԵՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ Է: ԸՆԿԵՐՆԵՐՍ ԱՍՈՒՄ ԵՆ՝ «ԻՆՉՈՒ ԵՍ ԱՆՈՒՄ ԴԱ»: ԵՍ ՄԻԱՅՆ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՍԵԼ, ՈՐ ՀՈՒՅՍ ՈՒՆԵՄ՝ ՄԻ ՕՐ ՆՐԱՆՔ ԿՎԵՐՍԿՍԵՆ ՎՃԱՐԵԼ ԻՆՉ: ԻՍԿ ՄԻՆՉ ԱՅԴ՝ ԵՍ ԱՅՍՏԵՂ ԵՄ, ՈՐՊԵՍՋԻ ՕԳՆԵՄ»:

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

Կառավարությունն ընդլայնում է բուլսր ֆաղաֆացիներին, մասնավորապես՝ հղիներին եւ կերակրող մայրերին մատուցվող առողջապահական ծառայությունները՝ որպես Վերականգնման եւ աղքատության կրճատման ազգային ռազմավարության՝ «Փոփոխությունների օրակարգի» (2009-2012) մի մաս: Սակայն կառավարությունը պահանջում է շարունակական ներդրումների զարգացման ոլորտում աշխատող միջազգային գործընկերներից՝ դիմագրավելու իր առջև ծառայած բազմաթիվ խնդիրները:

«Սիեռա Լեոնեն մի երկիր է, որը դեռևս ամբողջովին չի վերացրել հակամարտության հետևանքները», - նշում է ՄԳԱՀ ծրագրերի ղեկավար Ջեյմս Հարդինգը: «Շատ ցանկալի կլինի ավելի մեծ օժանդակություն ստանալ»:

Ապագան

Շահագրգիռ բուլսր կողմերը, սկսած կառավարությունից եւ վերջացած տեղական առաջնորդներով, տեղական ինտեգրումը դիտում են որպես կարելու եւ շահավետ ռազմավարություն ինչպես երկրում, այնպես էլ տարածաշրջանում: Ի հետևանք՝ այն իրավական, սոցիալական եւ մշակութային կողմերով ամրագրված է ազգային ֆաղաֆականության մեջ եւ իրականացվում է ինչպես գյուղական, այնպես էլ ֆաղաֆային համայնքներում: Սա տեղի է ունեցել ոչ միայն այն պատճառով, որ տեղահանված «Էդբայրների ու ֆուլբերի» համար դա անելը ճիշտ էր: Եվ ոչ միայն այն պատճառով, որ կառավարությունը դա դիտում է որպես միջազգային իրավունքի ներքո իր պարտավորություն, եւ ոչ էլ միայն այն պատճառով, որ դա սրամաքանական է տնտեսական եւ սոցիալական առումով եւ ապահովում է կոլեկտիվ օգուտներ տեղական համայնքների եւ ողջ երկրի համար: Բռնությամբ ուղեկցված հակամարտության թողած վերքերը կրող այս տարածաշրջանում մարդիկ հասկանում են, որ անվտանգությունը մի երկրում՝ նշանակում է անվտանգություն մյուս երկրում: Տեղական ինտեգրումը ոչ միայն սրամաքանական լուծում է փախստականների համար, այն նաեւ գործիք է՝ խորացնելու միմյանց սերտորեն կապված ու փոխադարձ կախվածության մեջ գտնվող այս տարածաշրջանում բնակվող բուլսր մարդկանց ապագա անվտանգությունն ու կայունությունը:

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

Խոշոր պատկերը

Տարածաբազանային մոտեցումներ տեղական ինտեգրմանը

«ԱՌԱՆՑ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ՝ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԷ ՀԱՄՆԵԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ»:

Վալենտին Տաբաբա, ՄԱԿ ՓԳՀ ներկայացուցիչ, Սիեռա Լեոնե

Երկրների միջև համերաժիոսության միջոցով տեղական լուծումների ձգտելը կարող է օգնել՝ հարաբերությունները փոխկախվածությամբ բնութագրվող աշխարհում հասնելու խաղաղության ու կայունության ավելի բարձր աստիճանի: Արևմտյան Աֆրիկայում եւ Լատինական Ամերիկայում փախստականների ինտեգրմանն ուղղված նորարարական լուծումներն իրականացվել են տարածաբազանային նախագծերի շրջանակներում՝ հասցեագրելու փախստականներին առնչվող բարդ եւ երկարաձգված իրավիճակները:

Արևմտյան Աֆրիկա.

«Ազատությունն անվտանգությունն է բերում»

2009 թվականին Արևմտյան Աֆրիկայում տեղական ինտեգրմանն էր ուղղված ՄԱԿ ՓԳՀ-ի ծրագրերի 50 տոկոսը: Այս տարածաբազանում տեղական ինտեգրումը կախված չէ ազգային կառավարությունների կողմից փախստականներին ֆազաբացիություն շնորհելուց:

Արևմտյան Աֆրիկայի պետությունների տնտեսական համագործակցության (ԱԱՊՏՀ/ECOWAS) ընդունած արձանագրությունները, որոնք վերաբերում են «Անձանց ազատ տեղաշարժին, բնակությանը եւ հաստատվելուն» [Free Movement of Persons, Residence and Establishment], սահմանում են Արևմտյան Աֆրիկայում տարածաբազանային տնտեսական ինտեգրման համար անհրաժեշտ իրավական շրջանակը եւ ապահովում հիմք՝ միջտարածաբազանային միգրացիայի կառավարման համար: Այն ԱԱՊՏՀ մասնակից պետությունների ֆազաբացիությունն օժտում է անդամ ցանկացած պետության տարածք մուտք գործելու, այնտեղ բնակվելու եւ հիմնավորվելու իրավունքով: ԱԱՊՏՀ մասնակից պետություններից սերող փախստականներն արժանանում են հավասար վերաբերմունքի: Հետևաբար, այս արձանագրությունները եզակի լուծում են առաջարկում լիբերացի եւ սիեռալեոնեացի նախկին փախստականներին՝ նրանց տրամադրելով ապահով օրինական բնակության հնարավորություն իրենց ընդունող երկրներում: Այս տարածաբազանային իրավական շրջանակը, բնակության եւ հպատակագրման հարցերը կարգավորող տեղական իրավական դրույթների հետ համադրությամբ, տեղահանված անձանց տրամադրում է մի շարք հնարավորություններ՝ տարածաբազանի տասնհինգ երկրներում պահանջելու իրավունքների պաշտպանություն եւ տեղական լուծումներ:

Գործնականում՝ Արեւմտյան Աֆրիկայի հակամարտությունների հետեւանքով տեղահանված բազմաթիվ անձինք, որոնց մեծամասնությունն իրենց ընդունող երկրներում ապրել է երկար տարիներ շարունակ, գերադասում են բնակվել, աշխատել եւ իրենց կյանքը վերստին կառուցել իրենց ապաստան սված երկրում՝ միեւնոյն ժամանակ պահպանելով իրենց առաջնային ֆաղափարությունը: Սիեռա Լեոնեում, օրինակ, ֆաղափարությունն առաջնահերթություն չէ: Նախկին փախստականներն իրենք իրենց առավելապես համարում են ԱԱՊՏՀ ավելի լայն համայնքի անդամներ, քան իրենց նոր պետության ֆաղափարներ: ԱԱՊՏՀ արձանագրություններով սահմանվող երաշխիքները նախկին փախստականներին իրավունք են տալիս հիմնավորվել իրենց ընդունող երկրում, երբ կամենում են, եւ միեւնոյն ժամանակ թույլ են տալիս պահպանել իրենց ֆաղափարությունն ու դրանից բխող բոլոր արտոնությունները:

Տեղական ինտեգրման այս հնարավորությունները հակամարտության միջով անցած եւ փախստականների ծագման երկիր հանդիսացող պետություններին նաեւ ազատում են չափազանց մեծ թվով վերադարձողների ինտեգրելու անհրաժեշտությունից: Ավելին, ԱԱՊՏՀ մասնակից այլ պետություններում ինտեգրվող եւ աշխատող բազմաթիվ նախկին փախստականներ նվիրատվության տեսքով փոխանցումներ են կատարում իրենց հայրենի երկրներ՝ այդպիսով իրենց նպաստը բերելով վերականգնմանը եւ զարգացմանն ուղղված ջանքերին:

Լատինական Ամերիկա.

Համերաշխությունը գործողության մեջ

Մարդկանց տեղաշարժը փախստականների մարդասիրական պաշտպանության եւ նրանց համար տեւական լուծումներ գտնելու լատինաամերիկյան մոտեցման առանցքում է: Տարածաշրջանային համերաշխության ավանդույթը ձեւավորվել է բռնության եւ տեղահանության, ներառյալ՝ 1970-ականների բռնատիրությունների եւ 1980-ականների ֆաղափարական պատերազմների ընդհանուր փորձի արդյունքում: Եթե դիտարկենք վերջին ժամանակաշրջանը, ապա Կոլումբիայում զինված հակամարտության երկու տասնամյակները հանգեցրել են ավելի քան 200,000 մարդու մահվան եւ ավելի քան երեք միլիոն տեղահանվածների՝ երկրի ներսում եւ ողջ տարածաշրջանում:

«ՀԱՄԵՆԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՈՒԴՆԵՐԻ ՔՆՔՇՈՒԹՅՈՒՆՆ Է»:

Պաբլո Ներուդա, մեջբերում փախստականների վերաբերյալ Էվադոյի որդեգրած ֆաղափարությունից,

2008 թվական

Տարածաշրջանով մեկ միլիոնավոր սեղահանված անձանց առկայությունը պահանջում է նորարարական եւ ստեղծագործական մոտեցումներ տեւական լուծումներ գտնելու հարցում: Եւս դեպքերում հենց այն համայնքները, որտեղ ապրում են փախստականները, իրենք էլ աղքատացած են, եւ նոր ժամանողներին օժանդակություն տրամադրելն այդ համայնքների համար բավական դժվար է: Այս հանգամանքը ընդգծել է տարածաշրջանի երկրների միջեւ պատասխանատվությունն ավելի լայնորեն կիսելու անհրաժեշտությունը, ինչպես նաեւ նման լուծումներն իրականություն դարձնելուն ուղղված գործընթացներին միջազգային հանրության կողմից աջակցության կարիքը:

2004 թվականին 20 լատինաամերիկյան երկրներ եւ ավելի քան 100 տեղական ՀԿ-ներ ՄԱԿ ՓԳՀ-ի աջակցությամբ տարածաշրջանի համար ընդունեցին մարդասիրական գործողությունների մի իրատեսական եւ գործնական ծրագիր: Մեխիկոյի գործողությունների ծրագիրը (ՄԳԾ) մի գործառնական տարածաշրջանային շրջանակ է, որի առանցքը տեղական ինտեգրումն է: Համարվելով հեռանկարային փաստաթուղթ փախստականների պաշտպանության ոլորտում՝ ՄԳԾ-ն տարածաշրջանային համերաժխության, միջազգային համագործակցության եւ գոյություն ունեցող խնդիրները համատեղ լուծելու օրինակ է հանդիսանում:

ՄԳԾ շրջանակում գլխավոր նպատակը հասնելն է փախստականների ինտեգրմանը՝ ընդլայնելով նրանց ինֆորմայնությունը եւ ինֆորմավորությունը, նվազեցնելով նրանց կախվածությունն ընդունող երկրներից եւ, ակնկալվում է, որ խորացնելով տարածաշրջանային կայունությունը: Կոլումբիացի փախստականները կենտրոնացած են ողջ տարածաշրջանի ֆաղաֆային համայնքներում եւ Կոլումբիայի ու հարեւան երկրների միջեւ սահմանին հարող պայթյունավտանգ տարածքներում: Սա հանգեցրել է տեղական ինտեգրման երկու նպատակային ծրագրերի ստեղծմանը՝ «Համերաժխության ֆաղաֆներ» եւ «Համերաժխության սահմաններ»: Ի հավելումն, մշակվել է «Համերաժխության վերաբնակեցում» ծրագիրը՝ աջակցելու փախստականների ռազմավարական վերաբնակեցմանը եւ ինտեգրմանը ողջ տարածաշրջանում:

Զնայած ՄԳԾ-ի իրականացումից ի վեր իրավական, սոցիալական եւ տնտեսական իրավունքների ոլորտներում կուտակվել են հաջող փորձի բազմաթիվ օրինակներ, դեռեւս առկա են հսկայական մարտահրավերներ: Այս հեռանկարային մոտեցման հաջողությունը եւ հարակայունությունը կախված կլինեն ոչ միայն յուրաքանչյուր երկրում ՄԳԾ-ի հիման վրա ձեւակերպված հստակ ազգային ռազմավարությունների ընթացիկ մշակումից, այլեւ արդյունավետ նախաձեռնությունների իրականացման նպատակով միջազգային աջակցության մակարդակից:

Համերաժխության ֆաղափներ

Լատինական Ամերիկայում տեղահանված ավելի քան 2.5 միլիոն անձինք բնակվում են ֆաղափային համայնքներում, տարածաբանորեն մեկ: Նրանցից շատերն ապրում են աղքատության շեմից ցածր եւ ունակ չեն ապահովել ապրուստի անհրաժեշտ միջոցներ: «Համերաժխության ֆաղափներ» ծրագիրը, մասնավորապես, նպատակ ունի ապահովել, որ փախստականներն օգտվեն այնպիսի ծառայություններից, որոնք համահավասար են տեղացիներին մատուցվող ծառայություններին, ինչպես նաև խթանել ՄԳԾ-ի առանցքային խնդիրներից մեկը՝ այս մարզիկանց համար ապահովել ապրուստի միջոցների ինֆրաբնակարաններ: Ավելի քան 50 ֆորմալ եւ ոչ ֆորմալ «Համերաժխության ֆաղափներ» տեսակի համաձայնագրեր են կնքվել ողջ տարածաբանում՝ օժանդակելու փախստականների, ներքին տեղահանված անձանց եւ ապաստան որոնողների տեղական ինտեգրմանը՝ նրանց ինֆրաբնակարանային եւ ինֆրաբնակարանային ընդլայնման, ընդունող երկրներից նրանց կախվածության նվազեցման եւ, ակնկալվում է, որ տարածաբանային կայունության խորացման միջոցով:

Կոստա Ռիկայում Դեսամպարադոսի համայնքապետարանը նմուշ է «Համերաժխության ֆաղափներ» ծրագրի տրամադրած այն մոդելի, որը նախատեսված է ֆաղափաբան փախստականների իրավական, տնտեսական եւ սոցիալական ինտեգրման հարցում համապարփակ մոտեցում որդեգրելու համար: Այստեղ տեղական եւ համայնքային իշխանությունների, ֆաղափացիական հասարակության, միջազգային գործակալությունների, փախստականների եւ ընդունող համայնքների միջև ամուր գործընկերությունները շեշտվելի փոփոխություններ են ապահովում բոլոր երեք ոլորտներում փախստականների ինտեգրման առումով:

«Casa de Derechos» (Իրավունքների տուն)

Մարիան Կոլումբիայից փախուստի դիմեց այն բանից հետո, երբ սպանվեց նրա ամուսինը: Նա հատեց սահմանը եւ անցավ Կոստա Ռիկա, որտեղ նրան ճանաչեցին որպես փախստական:

© ՄԱԿ ՓԳՀ / Բ. Հեգեր 2004

Չնայած այս տարածաբանում փախստականներին հատկացված իրավական, տնտեսական եւ սոցիալական իրավունքների առկայությանը, Մարիան, ինչպես շատ այլ փախստականներ, սեփական փորձով համոզվեց, որ նոր երկրում սեփական ուղին գտնելը եւ ինքն իրեն հասարակության մասնիկն զգալը հաճախ դժվարին գործընթաց է: Տեղահանված բազմաթիվ անձինք հայտնվում են միայնակության եւ մեկուսացվածության մեջ, առանց կենսապայմանների ստեղծման համար անհրաժեշտ միջոցների: Նրանց համար նաև դժվար է սեփական արժանապատվությունը եւ անկախությունը վերականգնելը:

Դեսամպարադուսը, որտեղ այժմ մոտ 3,500 այլ տեղահանվածների հետ միասին ապրում է Մարիան, իհարկե բնակեցված, ցածր եկամուտներ ունեցող ֆաղաֆ է, որը գտնվում է Կոստա Ռիկայի մայրաքաղաք Սան Խոսեի մերձակայքում: Այն նաև «Համերաժիության ֆաղաֆ» է: Դեսամպարադուսի ամենաևորարարական նախագծերից մեկը տեղակայված է մի սովորական ընտանիքի տուն հիշեցնող շինության մեջ, որը գտնվում է ադատությունից ամենաշատ սուժած թաղամասերից մեկում: Տունը, որը հայտնի է «Casa de Derechos» (Իրավունքների տուն) անվամբ, փոխում է տեղացիների, փախստականների եւ միգրանտների, ներառյալ՝ Մարիայի կյանքը:

«Casa de Derechos»-ը, լինելով բազմաճյուղային նախաձեռնություն, ինտեգրացված իրավական եւ սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն է տրամադրում փախստականներին, միգրանտներին եւ տեղացի բնակչությանը: Այսօր «Իրավունքների տուն» են հյուրընկալված, այլոց թվում, ֆաղաֆապետարանի Սոցիալական բաժինը, ՄԱԿ ՓԳՀ-ի մի ծրագիր, որն զբաղվում է միջազգային պաշտպանության, սեռական եւ գենդերահեն բռնության հարցերով, մի իրավական օգնության կենտրոն, որը ղեկավարվում է Կոստա Ռիկայի համալսարանի եւ Իրավաբանների ազգային ասոցիացիայի կողմից, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ) մի ծրագիր, որն զբաղվում է երիտասարդության, զբաղվածության եւ միգրացիայի խնդիրներով, «ԿԱՐԻՏԱՍ» կազմակերպության կողմից իրականացվող մի ծրագիր, որն ուղղված է աշխատանքային իրավունքների պաշտպանությանը, միկրոֆինանսավորման մի նախագիծ, որը կառավարվում է «APRODE»-ի կողմից, եւ մի համակարգչային լսարան, որը նախատեսված է «Կասայի» հաճախորդների համար: Այստեղ նաև անց են կացվում կրթական ու մշակութային միջոցառումներ: Այս ամենը «Իրավունքների տունը» դարձրել է մի սոցիալական կենտրոն, որտեղ բաժանումները փախստականների, միգրանտների եւ տեղացիների միջև կարճ ժամանակում վերանում են: Տեղացիների համար, ովքեր բուլսոն էլ գոյատևման նույն պայմարն են մղում, ստեղծվել է մի նոր համայնք:

Ժամանակին լինելով մասնահարդար՝ Մարիան պայքարել է, որպեսզի գտնի իրեն ապաստանած նոր ֆաղաֆում ապրուստ հայթայթելու որեւէ եղանակ, սակայն պահպանել է իր երազանքը՝ սկսել մի փոքր բիզնես: Նոր տեղեկացված լինելով աշխատելու իր օրինական իրավունքի մասին, եւ ստանալով օժանդակություն ՄԱԿ ՓԳՀ-ի միկրոֆինանսավորման նախաձեռնության միջոցով, նա մշակեց մի բիզնես-պլան: Այն բանից հետո, երբ Մարիան ցուցադրեց ինֆորմացիոն ստեղծելու իր հմտությունները եւ կարողությունը, նա ստացավ դրամաշնորհ՝ սկսելու ի կատար ածել իր երազանքը, որը ոչ թե եղունգների խնամքի սրահի, այլ ավտոմեքենայի վարման դպրոցի հիմնումն էր: Մարիան հպարտության զգացումով այս տարի գնեց իր առաջին մեքենան, իսկ նրա նոր բիզնեսը բավական հաջող առաջ է ընթանում: Այն այժմ ընդլայնվում է, իսկ Մարիան իր ընկերության առաջխաղացման նպատակով ստեղծում է ինտերնետային կայք:

Մարիան եւ այլ նոր ձեռներեցներ տեղերում պարգապես իրենց կյանքը չէ, որ փոխում են: Նրանք ոգեւորւում են «Կասա» նոր ժամանողներին, ովքեր տեսնում են, որ հնարավոր է դառնալ անկախ եւ իրենց նոր համայնքի աջակցությամբ կառուցել նոր կյանք:

Կորպորատիվ գործընկերությունների դերը տեղական ինտեգրման առաջնության գործում

© ՄԱԿ ՓԳՀ / Ս. Ագիյար 2010

Տարածաշրջանի բոլոր երկրները փախստականներին տրամադրել են աշխատելու իրավունք, իսկ Արգենտինան մեկն է այն յոթ երկրներից, որոնք այդ իրավունքով օժտել են նաեւ ապաստան սրահներին (մյուս վեց երկրներն են Բրազիլիան, Չիլի, Էկվադորը, Նիկարագուան, Պարագվայը եւ Պերուն): Աշխատելու հնարավորություն ունենալը, ինչպես բազմաթիվ տեղահանված անձինք են վկայում, միայն գոյատևման հարց չէ: Աշխատանք ունենալը նրանց թույլ է տալիս դառնալ այն համայնքի մարդկային «կտավի» մի մասը, որտեղ ապրում են: Դա նաեւ փոխում է փախստականներին ընդունող համայնքներում առկա ընկալումները. վերջիններս նրանց ընդունում են որպես հասարակության արժեքավոր անդամների:

Այսուհանդերձ, շատերի համար իրենց հյուրընկալած երկրում առաջին գործը գտնելը ծայրահեղ դժվար է: Բուենոս Այրեսում, առաջատար մասնավոր ընկերությունների հետ համագործակցությամբ, ստեղծվել է աշխատանքի տեղավորման մի նոր մեթոդիզմ՝ փախստականներին օգնելու, որպեսզի նրանք կարողանան մուտք գործել աշխատառուկա: ՄԱԿ ՓԳՀ-ն համաձայնագրեր է ստորագրել սննդի արտադրության եւ արագ սննդի ոլորտներում գործող մի շարք խոշոր ընկերությունների՝ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության համար իրավասու բաժինների հետ: 2010 թ. հոկտեմբերին այս մեթոդիզմի ներքո ընտրված առաջին 30 թեկնածուներին ուղարկեցին այդ ընկերություններ՝ հարցազրույցների: Արգենտինայում տեղակայված տարածաշրջանային գրասենյակը եւ իրականացնող գործընկերները վերջերս տարածվել են դեպի այնպիսի նոր հյուրեր, ինչպիսիք են զբոսաբերությունը եւ հյուրանոցային բիզնեսը:

Համերաշխության սահմաններ

Կոլումբիայում սահմանամերձ գոտիներում բնակվող փախստականների համար մշակված մոտեցումը հիմնված է ոչ թե բնակչության, այլ տարածքային սկզբունքի վրա, ինչը համակարգված բազմակողմ արձագանքը դարձնում է կազմակերպման տեսանկյունից առավել դյուրին այն երկրների համար, որոնք ներգրավված են Կոլումբիայի շուրջ ստեղծված իրավիճակին:

2004 թվականից ի վեր ՄԱԿ ՓԳՀ-ն եւ իր գործընկերները մշակել են ավելի քան 1,000 համայնքային նախագծեր սահմանամերձ համայնքներում: Իրականացվել է միջպետական տասնմեկ նախագիծ, ներառյալ՝ նախաձեռնություններ կրթության, առողջապահության, կառավարման բարելավման եւ տնտեսական

գարգացման բնագավառներում: Մեկնարկել են նաև եկամուտների ստեղծմանն ուղղված 350 ծրագրեր, որոնց արդյունքներից շահել է Պանամայի, Էկվադորի եւ Վենեսուելայի սահմանամերձ գոտիների ավելի քան 6,400 բնակիչ: Սրանց բվում են եղել համայնքային միկրոֆինանսավորման ծրագրեր՝ ուղղված փոքր ձեռնարկատիրության աջակցությանը, ինչը փախստականներին հնարավորություն է տվել դառնալ իրենց ընդունած նոր հասարակությունների ակտիվ մասնակիցներ եւ վերածվել իրենց նոր համայնքների ինֆրաբնակարանների:

Նկարի գրառումը. Մի տեղաբնիկ, ով օգտվել է ՄԱԿ ՓԳՀ միկրոֆինանսավորման ծրագրից՝ տնկելու բանաններ, բարձում է դրանք կանոնի վրա, որպեսզի տեղափոխի եւ վաճառի Յավիզա գյուղում (Ռիո Չիկո, Դարիենի մարզ):

© ՄԱԿ ՓԳՀ / Բ. Հեգեր 2006

Սահմանների երկայնքով տեղական ինտեգրումը խթանվում է փախստականներին ցուցաբերվող օժանդակությունը համապետական եւ մարզային գարգացման ծրագրերի հետ շաղկապելու միջոցով:

Էկվադոր. ինչպես թափնվածը դարձավ տեսանելի

Էկվադորը Լատինական Ամերիկայում առաջատարն է գրանցված փախստականների քանակով. մոտավորապես 135,000⁴ մարդ միջազգային պաշտպանության կարիք ունի: Փախստական բնակչության մոտ 40 տոկոսն ապրում է գյուղական համայնքներում:

Հյուսիսային Էկվադորի եւ Կոլումբիայի հեռավոր սահմանին, ի հետեւանք շարունակվող հակամարտության, հազարավոր մարդիկ են տեղահանվել իրենց հայրենի հողից: Տեղաբնիկ ցեղախմբեր ներկայացնող անձինք, որոնցից շատերն ունեն երկֆազաբնակչություն, նույնպես ստիպված են եղել փախուստի դիմել եւ լքել իրենց տները, որպեսզի փրկեն իրենց երեխաներին պարտիզանական ջոկատների կողմից զինվորագրվելուց կամ ջունգլիներում որպես ուղեկցող ծառայելուց: Արդյունքը անհայտ քանակով տեղահանված անձինք են, ովքեր ապրում են Հյուսիսային Էկվադորի՝ արդեն չֆավորության հասցված գյուղերում եւ գյուղական համայնքներում:

Ըստ Էկվադորում ՄԱԿ ՓԳՀ ներկայացուցիչ Դեբորա Էլիզոնդայի. «Կոլումբիացի փախստականների 40 տոկոսն ապրում է հյուսիսային շրջաններում, քանի որ այն ամենը, ինչ նրանք գիտեն՝ ձկնորսությունն է, հանապազօրյա հացը հողի միջոցով վաստակելը»: Այս «թափնված» փախստականների փաստաթղթավորումը եւ նրանց իրավական ճանաչումն առաջին ֆայլերն են դեպի ինտեգրում, սոցիալական եւ տնտեսական մի շարք իրավունքներից օգտվելու հնարավորությամբ նրանց օժտում: Դա նաև հնարավոր է դարձնում

⁴ 2009 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

գարգացմանն ուղղված նպատակային պլանավորումը՝ այս հեռավոր շրջաններում փախստականներին ընդունող համայնքներին աջակցելու նպատակով:

2009 թվականի մարտից մինչև 2010 թվականի մարտ ընկած ժամանակահատվածում ՄԱԿ ՓԳՀ-ի աջակցությամբ Էկվադորի կառավարության կողմից իրականացվեց փախստականների գրանցման մի ընդգրկուն ծրագիր՝ փաստաթղթավորելու համար այս հեռավոր սահմանամերձ շրջաններում մարդկանց տեղահանության իրական պատկերը: Նշված ծրագրի արդյունքում 27,740 մարդ ճանաչվեց որպես փախստական, եւ այժմ նրանք կարող են աշխատել եւ ապրել օրինական հիմունքներով, եւ աջակցության դեպքում ի վիճակի կլինեն ինտեգրվել իրենց նոր համայնքներում:

© ՄԱԿ ՓԳՀ/Մ.-Հ. Վերնեյ 2008

Փախստականների գրանցման արժավից ստացված այլ տեղեկությունները կօգնեն ինտեգրման ծրագրերի պլանավորմանը եւ մշակմանը տարածաշրջանում: Այս միջոցառումը նաեւ բացահայտում է պահանջվող աշխատանքի ծավալը՝ գարգացման հարցերով զբաղվող գործընկերներին թույլ տալով ներգրավվել եւ օժանդակել Էկվադորին՝ հասնելու երկրի առջև դրված նպատակներին:

Զարգացման նպատակով տեղական համայնքներին ցուցաբերվող աջակցությունը նրանց օգնում է ընդունել փախստականներին այն ժամանակաընթացքում, երբ նրանք ինտեգրվում են: Այդ օժանդակությունը նաեւ օգնում է կառավարություններին՝ պահպանել ժողովրդական աջակցությունը տեղական ինտեգրմանը, որը տեւական լուծում է, մեղմում է տեղական լարվածությունը եւ փախստականներին ընդունելու դժվարությունները, ինչն իր հերթին կանխարգելում է մարդկանց հետագա տեղահանումը:

Հարակայուն ապագայի ապահովում

Անկախ իրենց յուրահատուկ սոցիալ-տնտեսական վիճակներից՝ Լատինական Ամերիկայի երկրները բարձր են պահում ՄԳԾ-ի ոգին եւ ողջ տարածաշրջանում առկա փախստականներին տրամադրում «բաց դռների» ֆադաֆականություն: Նույնիսկ հաշվի առնելով այս ամենը՝ հեռանկարային իրավական շրջանակի եւ տեւական լուծումների նպատակով ռազմավարության ստեղծումը անհմաստ կլինեին առանց կուռ ազգային ռազմավարության եւ այն տեղերում իրականացնելու միջոցների:

ՄԱԿ ՓԳՀ-ն աշխատում է տարածաշրջանի մի շարք երկրների հետ գործընկերությամբ՝ ստեղծելու ազգային կարողություններ եւ օժանդակելու համապարփակ ազգային ռազմավարությունների մշակմանը:

Կարողությունների նման գարգացմանն ուղղված շարունակական աջակցությունը կերպաշավորի, որ տեղահանված անձինք չվերածվեն մարդկանց լուսանցֆային ստորադաս կարգի, ինչը կստեղծի

լարվածություն համայնքների ներսում եւ կիսարխի համերաժխության այն ավանդույթը, որն այս տարածաշրջանի առանձնահատկությունն է եղել երկար տարիներ շարունակ:

Եզրակացություններ

© ՄԱԿ ՓԳՀ / Բ. Հեգեր 2006

Այս օրինակներից յուրաքանչյուրում ՄԱԿ ՓԳՀ-ն խաղացել է խթանիչ դեր, ներառյալ տեխնիկական եւ ֆինանսական աջակցության, գաղափարների եւ խորհրդատվական ծառայությունների տրամադրումը: Ազգային եւ տեղական գործընկերների հետ համագործակցությամբ մշակվել են նախաձեռնություններ, որոնք հարմարեցված են յուրաքանչյուր երկրի յուրահատուկ իրավական եւ սոցիալական համատեքստին: Դրանք հատուկ մշակվել են այնպես, որ այն դեպքերում, որտեղ հնարավոր է, հաջողությամբ գործեն գոյություն ունեցող «բնականներում» գույախեռ համակարգեր ստեղծելու վախճարեն: Լայնամասշտաբ խորհրդակցությունները եւ շահագրգիռ կողմերի լիարժեք մասնակցությունը հանգեցրել են նորարարական լուծումների, որոնք իրենց հերթին նպաստել են իրատեսական քաղաքականությունների ձեւավորմանը: Տեղեկությունների տարածումը եւ իրագրելիության մակարդակի բարձրացումն ուղի են հարթել ռազմավարությունների հաջող իրականացման համար:

Վերջապես, ինչպես ցանկացած հաջող քաղաքականության դեպքում, արդյունավետ տեղական ինտեգրումն առաջ է մղվում տարածաշրջանային, ազգային եւ տեղական մակարդակներում քաղաքական կամֆի եւ ուժեղ առաջնորդների շնորհիվ, ովքեր հանաչում են այդ մտտեցման արժեքը:

Միջազգային իրավունքին նվիրվածությունը եւ համերաժխության ու ընդհանուր պատասխանատվության կարեւորության ընկալումն իրենց դերն են ունեցել մեր կողմից այստեղ դիտարկված նախադեպերում: Ստացված արդյունքներն ընդգծում են այս մտտեցման արժեքը. երկրներն սկսել են վախճատականներին դիտել ոչ թե որպես քաղաքացիություն չունեցող խնդրահարույց անձանց, այլ որպես ղեկավարներով հարուստ անհատների եւ խմբերի, ովքեր, հոգատար վերաբերմունքի եւ ինտեգրման թույլտվության դեպքում, կարող են բարգավաճել եւ բազմաթիվ եղանակներով արժեքավոր ներդրում ունենալ իրենց նոր տանը:

«Տեղական ինտեգրում» նշանակում է...

Տեսական լուծում. մնայուն, խաղաղ եւ արժանապատիվ լուծում վախճատականների երկարաձգված դժվարին կացությանը:

Ճկուն մտտեցում. բազմաթիվ ծրագրեր տարբեր քաղաքական եւ սոցիալական իրավիճակների եւ կոնկրետ երկրների կարիքներին հարմարեցված ընտրության տարբերակներով եւ ներգրավվելու մակարդակներով:

Տեղացի առաջնորդներ. գործընթացներն առաջնորդվում են տվյալ երկրի կառավարության կողմից՝ ՄԱԿ ՓԳՀ-ի և այլ արտաֆին աջակցությամբ: Կառավարությունները կարող են արդյունավետորեն ղեկավարել փախստականների շուրջ իրավիճակը և ռազմավարական պլանավորման միջոցով գործընթացներում ներգրավել միջազգային դերակատարների՝ ապահովելու լավագույն արդյունք ինչպես ընդունող համայնքների, այնպես էլ փախստականների համար:

Կիսել բեռը. ազգային կամ տարածաշրջանային մոտեցում, համաձայն որի ներգրավվում է միջազգային հանրության աջակցությունը:

Զարգացում. զարգացման հարցերով զբաղվող գործընկերներին թույլ է տալիս ներգրավվել համայնքահեն աջակցության և զարգացման ծրագրերում՝ ընդունող երկրին օգնելու նպատակով, ինչպես նաև փախստականներին հնարավորություն է տալիս լինել զարգացման հարուցիչներ, այլ ոչ թե օգնություն ստացողներ:

Հնտությունների տարածում. հնարավորություն է տալիս փախստականներին, որոնցից շատերը լավ կրթություն են ստացել և հմուտ են, դառնալ ինժեներական և իրենց նպաստը բերել տեղական տնտեսություններին և ողջ հասարակությանը:

Խաղաղարարություն. տեղական ինտեգրումը նպաստում է տարածաշրջանային խաղաղությանը և ազգային անվտանգությանը՝ խորտակելով փախստականների և ընդունող համայնքների միջև արգելիքները:

Տեղական ինտեգրումը հակամարտությունների, բռնության կամ հետապնդումների հետևանքով սեղանակալից հասարակ մարդկանց թույլ է տալիս գտնել տեղական լուծում իրենց դժվարին կացությանը՝ վերջ տալով անորոշությանը և հնարավորություն ընձեռելով առաջ շարժվել իրենց կյանքի ուղիով:

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

Ռեսուրսներ դոնորների և ընդունող կառավարությունների համար

Փախստականների և այլ խոցելի խմբերի համար տեղական լուծումների շրջանակ,

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (2003)

<http://www.unhcr.org/refworld/docid/4124b6a04.html>

Օժանդակություն փախստականներին հանուն զարգացման (ՕՓԶ) ծրագրերի պլանավորման և իրականացման ձեռնարկ, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (2005)

Տեղական ինտեգրումը և ինֆրաբյուրոյունը, EC/55/SC/CRP.15, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (հունիսի 2, 2005)

<http://www.unhcr.org/refworld/docid/478b3ce12.html>

Փախստականների իրավունքները ինտեգրման համատեքստում. Իրավական ստանդարտներ և առաջարկություններ, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (հունիս, 2006), POLAS/2006/02 <http://www.unhcr.org/refworld/docid/44bb9b684.html>

Համակցության նախագծերի վերաբերյալ ուղղորդող ծրագրային ուղեցույց, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (մարտ, 2010)

Տարածաբանային ռեսուրսներ

Մեխիկոյի հոչակագիրը և Հատինակոն Ամերիկայում փախստականների միջազգային պաշտպանության ամրապնդմանն ուղղված գործողությունների ծրագիրը, նոյեմբերի 16, 2004

<http://www.unhcr.org/refworld/docid/424bf6914.html>

Դեպի Արևմտյան Աֆրիկայում շիբերիացի և սիեռալեոնեացի փախստականների տեղական ինտեգրում՝ ինֆրաբյուրոյուն ընդլայնման և տարածաբանային ինտեգրման խթանման միջոցով

Տարածաբանային բլոգ, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (2008)

<http://www.unhcr.org/4a27be466.html>

Ինտեգրման վերաբերյալ ձեռնարկ Բաղադրականություն մշակողների և կիրառողների համար, Եվրոպական միություն. Եվրոպական հանձնաժողով (նոյեմբեր, 2004)

<http://www.unhcr.org/refworld/docid/4374978b4.html>

Առանձին երկրների վերաբերող ռեսուրսներ

Համայնքային ինտեգրման ազգային ռազմավարության ծրագիր (ՀԻԱՌԾ) 2010-2014, Վարչապետի գրասենյակ, Տանզանիա (2010)

Տանզանիայի տեղական ինտեգրման ծրագրի միասնական գործողությունների պլան, «Նոր հպատակագրված տանզանիացիներ, 2010-2014», ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (2010)

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

Հլգուջայի պատմությունը. «ԲելաՎրաստան» հացի փուռ, Գրոդնո, Բելառուս

Մի փոքրածավալ հացի փուի արտադրամասում կտրում են տաֆ հացը, որի վրա հալեցված պանիր է: Հլգուջա Մանիան՝ «ԲելաՎրաստան» հացի փուի տնօրենը եւ Գրոդնոյի վրացիների հասարակական միավորման նախագահը, բոլորին առաջարկում է համտեսել այն: Հացը շատ համեղ է:

Հլգուջան 1994 թվականին, երբ 37 տարեկան էր, կնոջ, երեք երեխաների եւ ծեր մոր հետ մի լեռնային վտանգավոր ճանապարհով եկել է Բելառուս՝ խուսափելու համար կրոնական հետապնդումներից Աբխազիայում: Հասնելով Բելառուս, ի վիճակի չլինելով գտնել պաշտոնապես գրանցված աշխատանք, նա օրվա հացը վաստակում էր հասարակության «լուսանցքում»՝ իր կյանքը վերստին կառուցելիս դժվարությամբ «ծայրը ծայրին հասցնելով»:

2003 թվականին հիմնվեց «ԲելաՎրաստան» հացի փուռը, որի անվանումը ծագել էր մի կենացից՝ նվիրված երկու երկրների միջեւ բարեկամության ոգուն: Հացի փուռը փախստականների համար նախատեսված նոր սոցիալական ձեռնարկատիրության ծրագրի շրջանակներում իրականացված փորձնական նախագիծ էր, որը կյանքի կոչվեց ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից տրամադրված՝ 31,000 ԱՄՆ դոլարի չափով մեկնարկային դրամաշնորհի շնորհիվ: Ներկայում «ԲելաՎրաստան»-ում թխված ավանդական վրացական պուրին վաճառվում է ֆադաֆի բազմաթիվ խանութներում:

Հացի փուռն այժմ աշխատում է 18 հոգի, որոնցից ինը բելառուս են: Ստացված շահույթն օգտագործվում է վրացական մշակույթին նվիրված միջոցառումների կազմակերպման նպատակով, սակայն դրանք բաց են բոլոր համայնքների ներկայացուցիչների համար: Ձեռնարկությունը նաեւ աջակցում է վրացերենի ուսուցման դասընթացների, վարձում է թարգմանիչների՝ նրանց համար, ովքեր դրա կարիքն ունեն, վճարում է բժշկագիտություն սովորող երիտասարդ փախստական կանանց ուսման վարձերը եւ աջակցում է երկու կարիքավոր ընտանիքների: Միայն 2009 թվականին «ԲելաՎրաստան»-ը վճարել է 40,000 ԱՄՆ դոլարի չափով հարկեր: Այն բոլորի՝ կառավարության, ՄԱԿ ՓԳՀ-ի, Հլգուջայի, փուի աշխատակիցների եւ տեղական համայնքի կողմից համարվում է աներկբա հաջողություն: Այսօր «ԲելաՎրաստան»-ը ներկայացվում է որպես փախստականների կողմից դեկավարվող համայնքային գործարարության եւ աջակցության ձեռնարկություններ հիմնելու մոդել Բելառուսում:

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

«ՄԱՐԴԻԿ ԳՆՈՒՄ ԵՆ ՄԵՐ ՀԱՅԸ, ՀԱՄՏԵՍՈՒՄ ԵՎ ՄՏԱԾՈՒՄ՝ «ԻՆՉ ՀԱՄԵՂ Է»: ԱՅՆՈՒՇԵՏԵՎ ՆՐԱՆՔ ՆԿԱՏՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԲԵԼՎԱՎՐԱՍՏԱՆ»: ՍԱ ՆՐԱՆՑ ՍՏԻՊՈՒՄ Է ՄՏՈՐԵԼ: ԴԱ ՓՈՆՈՒՄ Է ԱՅՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՆՐԱՆՔ ԸՆԿԱԼՈՒՄ ՄԵՉ»:

Գոչա Օսանիձե, Գրոդնոյի վրացիների հասարակական միավորում

© ՄԱԿ ՓԳՀ / Գ.Քենթ 2010

ՄԱԿ ՓԳՀ

Փոստարկի 2500

1211 ժնեւ 2

Շվեյցարիա

www.unhcr.org

Կազմի լուսանկարները. Ինտեգրվող լիբերիացի եւ սիեալեոնեացի դալոցականներ, արեւելյան Սիեալեոնե

© ՄԱԿ ՓԳՀ/ Գաբի Քենթ 2010

Երեխայի դիմանկար Տանգանիայի Չոգո գյուղում

© ՄԱԿ ՓԳՀ/ Բրենդան Բենոն 2008